1895 ՅՈՒԼԻՍԻ 5 (Յուլ. 17) ՇՈՐԵՔՇԱԲԹԻ

№. 75—ՏԱՍՆԵԻՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 75

1895 ՅՈՒԼԻՍԻ 5 (Յուլ. 17) ՇՈՐԵՔՇԱԲԹԻ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատունը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“.
կամ՝ Tiflis Rédaction „Ardzagang“.

ԱՐԶԱԳԱՆՔ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և ազգ. օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

„ԱՐԶԱԳԱՆՔ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Բաժանորդագրութիւն ընդունվում է ԽՄԲԱԳՐՈՏԱՆը (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդաթանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 Ռ. ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ 6 Ռ.

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ. Редакція "Ардзаганкъ". *իսկ արտասահմանից՝* Tiflis, Rédaction du journal arménien „Ardzagang“

Ցայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Հայաստանի համար մշակուած ռէֆորմների ծրագիրը։

Կ. Պոլսից։

Մակեդոնական ապստամբութիւնը։

Դրան քաղաքական անհեռատեսութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — «Արձագանքի» հեռագիր։ Կիլիկիոյ աթոռոյն կաթողիկոսական ընտրութիւնը։ Թեմիս գեր. առաջնորդի ուղեկցութիւնը Նորին Վեհափառութեան։ Վեհ. Կաթողիկոսին դիմաւորողներ։ Միխայլովից։ Ալայլիայից։ Կ. Պոլսից։ Բաթումում քաղաքագիտութիւն։ Դեղատային նոր կանոնագրութիւն։ Հանգուցեալ Ի. Ա. Վիշնէգրադսկու կտակը։

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ՏԱՃԿԱՍ-ՀԱՅԱՍՏԱՆ. — Նամակ Ալաշկերտից։ Նամակ Կարինից։

ԹԵՐԹՕՆ. — Մեֆիստոֆելէսի ժըպիտը։

ՖԵԼԻԷՏՕՆ.—Կրթական գործը Պարսկա-Հայաստանի մէջ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՄՇԱԿՈՒԱԾ ՌԷՖՕՐՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

(«Daily News», հեռագիր Կ. Պոլսից, յուլիսի 4.)

Այժմ երբ ռէֆորմների ծրագրի ընագիրը հրատարակուած է, կարելի է ստուգել, թէ որքան խնամքով են կատարել գեսպանները՝ իրենց ստանձնած աշխատութիւնը։ Նոքա պէտք է այնպիսի առաջարկութիւն մշակէին, որ ապահովելով հայերի կեանքը և գոյքը, միևնոյն ժամանակ միջոցներ ստեղծել Մշտական Կոմիտետ հաստատելու և Բարձրագոյն Կոմիսարի նշանակելու ճանապարհով։ Սոցա կ'ուզուին բոլոր գանգատները, որովհետև Կոմիտետի հետ յարաբերութիւններ կ'ունենան դրագոմանները, իսկ Կոմիսարի հետ—գեսպանները։ Սկզբում այնպիսի մարմիններ կը հաստատուին, որոնց յատկապէս յանձնուած կը լինին ռէֆորմների իրագործումը։ Նոցա կարող են խանգարել, նոցա ճանապարհի վրայ խոչընդոտներ կարող են ստեղծել, բայց այնուամենայնիւ այն ժամանակ աւելի դիւրին կը լինի պատասխանատու անել Դուռը նորա անգործութեան կամ անարդարութեան համար, քան թէ այժմ, երբ Հայաստանի կառավարութիւնը միմիայն ենթ ներքին գործոց նախարարի իրաւասութեան մի փոքր մասն է կազմում։ Հայաստանի ամենամեծ դժբախտութիւնը կազմում են փոքր չարիքների ամենամեծ թուի կուտակումը, որոնցից իւրաքանչիւրն առանձին առնուած, մի նշանաւոր մեծութիւն չէ կազմում և յաճախ մինչև անգամ բաւական չէ օտար պետութեանց միջամտութիւնը պայմանաւորելու։ Մշտական Կոմիտետը կը նպաստէ փոքր չարիքների այդ մեծ թիւը պարզելու։

Ես նկատում եմ, որ հայոց մի քանի բարեկամները ցաւում են որ Բարձրագոյն Կոմիսարը ոչ - եւրոպացի է լինելու։ Մի քանի դիտողութիւններով ցանկալի կը լինէր որ այդ կէտը մոցրած լինէր։ Այս խնդիրը քննուեցաւ Կ. Պոլսում նախ քան ռէֆորմների ծրագիր ներկայացնելը,—բայց եթէ նոյն իսկ մի կողմը թողնելու լինինք, որ այսպիսի մի որոշում մտցնելը՝ ծրագրին Դրան համաձայնութիւնն ստանալը սաստիկ կը դժուարացնէր,—կային ի հարկէ և ուրիշ դիտողութիւններ, որ աչքի առաջ ունեցան դեսպանները։ Բարձրագոյն Կոմիսարը ի դէպս կարկառութեան իր ձեռքի տակ այժ պէտք է ունենայ։ Ծանդարմերին կը կազմէր այդպիսի այժի առաջին շարքը,—բայց դորա եռեից անհրաժեշտաբար կանգնած կը լինէր մահմեդական զօրքը։ Եթէ մի օտարի տրամադրութեան ներքոյ այնպիսի այժ դրուած լինէր, նորա դրութիւնը այնքան անկախ կը լինէր վեհապետական իշխանութիւնից, որ պետութիւնները դորա փոխարէն հէնց ուզածի կարող էին անկախ իշխանութիւն (principauté) կազմակերպել—մի բան, որ իրերի գրութեան ծանօթ անձինքներից ոչ ոք չէ ակնարկել և ըստ երևոյթին չէ ակնարկում։ Այս բոլորն ի հարկէ տեղիք կ'ունենայ, եթէ ենթադրենք որ զօրքերը նորա տրամադրութեան ներքոյ կը գտնուին։ Այստեղ կարող էր այն վտանգն առաջ գալ, որ օտար Բարձրագոյն Կոմիսարի հրամանատարութեան ներքոյ գտնուած մահմեդական զօրքերը կը հրաժարուին հնազանդուելու։

Եթէ տաճկական կառավարութիւնը պատասխանատու յայտարարուի ռեֆորմների իրագործման մասին—այդ պատասխանատուութիւններն աւելի իրագործելի կը լինի տաճկահպատակ բարձրագոյն Կոմիսարի միջնորդութեամբ։ Առաջարկութեան մէջ ասած է, որ «բարձրագոյն Կոմիսարը լիազօր և լիակատար իշխանութիւն պէտք է ունենայ վալիների վրայ»։ Պետութիւնները որոշեցին, որ այդպիսի իշխանութիւնը հարկաւոր է՝ նոցա առաջարկութիւնը գործադրելու և գործականապէս իրագործելու համար։ Նրան (Կոմիսարին) պէտք է մեծ իշխանութիւն տրուի, նա իր պաշտօնով պիտի նմանի փոխարքայի։ Իսկ մի օտարահպատակ քրիստոնեայի գլուխ կարգելը վալիների վրայ, որոնց մեծ մասը, եթէ ոչ ամենքը մահմեդական կը լինին, այնքան նոր անսպասելի կը լինի Տաճկաստանի համար, որ դա մի տեսակ վտանգաւոր փորձ կարող է համարուել։ Գործնական խնդիրն այն է, թէ արդիօք սուլթանի հպատակ, թէ ոչ-հպատակ անձն աւելի յարմար կը լինի վալիների վրայ «կատարեալ և լիազօր իշխանութիւն» վարելու համար։ Ով էլ լինի Կոմիսար նշանակուած՝ մահմեդական թէ քրիստոնեայ (պետութիւնների հաւանութեամբ) աւելի պակաս դիմադրութեան կը հանդիպի վալիների կողմից քան մի օտարահպատակ։

Գէտ է ի նկատի ունենալ այն փաստը, որ բարձրագոյն Կոմիսարի նշանակումը այն կէտն է, որի դէմ տաճիկներն ամենից աւելի առարկութիւն են անում։

Հէնց սկզբում այս գաղափարի դէմ տաճիկներն անդադար բողոքում էին։ Այս բացատրւում է ոչ միայն նրանով որ այդ գաղափարը մի տեսակ շօշափում է սուլթանի բարձրագոյն իրաւունքները, այլ և նրանով, որ այդպիսի պաշտօնեայն (Կոմիսարը) իսկապէս կը լինի Հայաստանի նախարար և կունենայ շատ աւելի մեծ իշխանութիւն, քան որ և է այլ նախարար։ Ծրագրի առաջարկելու և պատասխանի մէջ եղած ժամանակամիջոցում դեսպաններից հարցրին, եթէ մշտական հսկողութեան (կոնտրոլի) Մասնաժողովն ընդունուի, արդեօք նորա կը համաձայնեն թոյլատրել, որ փոխանակ բարձրագոյն Կոմիսարի, այդ յանձնաժողովը ենթարկուի ներքին գործոց նախարարին։

Դեսպանների պատասխանում ասած է. «Այո, եթէ միայն մեզ կը յանձնուի այդ նախարարի նշանակելը կամ veto-ի իրաւունքը նրան նշանակելիս»։

Բարձրագոյն Կոմիսարը իւր իշխանութեամբ կազմում է պետութիւն պետութեան մէջ, (imperium in imperio)։ Բաւական դժուար է հասկանալ տաճկին, որ նա կատարելապէս համաձայնի Բարձրագոյն Կոմիսարի նշանակուելուն։ Առանց ստիպման անհնարին է, որ նա համաձայնի օտարականի նշանակելու։ Շատ ցաւալի է, որ Բարձրագոյն Կոմիսարը չի նշանակուիլ որոշ ժամանակով (տարիներով) և կը լինի մշտական պաշտօնատար. բայց պետութեանց միտքը, ինչպէս երևում է, այն է, որ նա գործերը կարգի բերէ, ունենալով այս նպատակի համար յայնաժամաւոր իշխանութիւն, իսկ այնուհետև Մշտական Կոմիսիան, օտար հիւպատոսներից ստացած տեղեկութեանց և դեսպանատների արտօնած հսկողութեան հիման վրայ, կարող է ռէֆորմների ներգործութիւնը պահպանել կատարեալ կարգի ու կանոնի մէջ։ Կարեւոր է մշտական մի հաստատութիւն, որ ըստ բաւականի միշտ մանր չարիքներով, որոնց դէմ պէտք է գործ դնէ միջոցներ, որ նորա չաճեն ու չմեծանան։ Այս պահանջը, կրկնում եմ, կ'իրագործի Մշտական Կոմիսարը լիազօր և լիակատար իշխանութեամբ վալիների վրայ, անպայման անհրաժեշտ է սկզբում և միշտ կը լինի օգտակար։ Եթէ պետութիւնները կը տեսնեն, որ մի քանի վալիների անշնորհրութիւնից կամ չկամութիւնից Մշտական Կոմիսիայի առաջադրութիւնները չեն կատարվում, նորա ունին միջոց պահանջելու, որ Բարձրագոյն Կոմիսարը պաշտօնանկ անուի։ Ցայտնի բան է այսպիսի մի պաշտօնատար գոյութիւն կ'ունենայ թէ ոչ, դա միևնոյն է, ինքը տաճիկ կառավարութիւնը պէտք է հոգայ անյարմար վալիին պաշտօնանկ անելու և սուլթանի հաստատած ռէֆորմներն իրագործելու մասին, բայց ամենքի համար, որոնք ծանօթ են Դրան ամեն բան յետաձգելու զարմանալի ընդունակութեանը, ակնայտնի է, որ աւելի յուսալի է, թէ փութով և ճշգութեամբ կատարուին ռէֆորմները պետութիւններից արտօնուած իշխանութեամբ Կոմիսարի միջոցով, քան տաճկական նախարարների խորհրդով, որի որոշումները պէտք է նախապէս ուղարկուին սուլթանի պալատը։

Ծրագրի մէջ կան երկու գլխաւոր կէտեր՝—դրա են Մշտական Կոմիսիայի և Բարձրագոյն Կոմիսարի նշանակուելը։ Շատ բան կարելի է ասել յօգուտ այն առաջարկութեան, որով եռանդուն պահանջէին նոր օրէնքներ և հաստատութիւններ Հայաստանի կառավարութեան համար։ Առաջարկուած ծրագիրը միանգամայն պարզ է—բաւականութիւն տալ երկրի պահանջներին։ Ի հարէէ ծրագրուած հաստատութիւններին կից կը գործեն նաև եւրոպական հիւպատոսները, որոնց հաշիւները փոխանակ գիւանական արկղներում մնալու կամ Կապոյտ Գրքի մէջ (Blue-Book) հրատարակուելու, կը ներկայացուին Մշտական Կոմիսիային և Բարձրագոյն Կոմիսարին, որպէսզի

ՖԵԼԻԷՏՕՆ

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՊԱՐՍԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

93-ի ամառը Սալմաստ գանուեցայ։ Այնտեղ, ինչ որ ամենէն աւելի ուշադրութիւնս գրաւեց, այս էր որ սահմանի մէկ և միւս կողմից այնտեղ գանուող երկու տասնեակ հայերի և տեղացի հայերի միջև մասնաւոր խորթութիւն մը կար։ Դրսեցիները կաշախ կանուանուէին, որ սահմանից ալ եկած լինէին ադոնք, ինչ արհեստի կամ ինչ գործի մէջ ալ եղած լինէին։ Այդ մի բուռն երիտասարդ դրսեցիների մէջ կային և արձակուրդով եկող Դավրէժի ուսուցիչներ, վանքի աշխատաւորներ, իրենց անձնական աշխատանքով այնտեղ ապրող արհեստաւորներ և մի քանի անգործներ։

Այդ կաշախներ մեկուսացած կապրէին. ոչ կրթական, ոչ տեղական և ոչ ալ ընդհանուր մի գործի մէջ դրսեցին և տեղացին յարաբերութեան մէջ կը գտնուէին, եթէ չհաշուենք Դէրիկ վանքին օգնութեան խնդիրը։ Երկրին ծերերը և հարուստները կասկածելով, թէ օտարականներին երկրին մէջ գտնուիլը կրնայ մէկ օրէն միւսը իրենց անձնական հանգստութիւն վրդովել և միւս կողմէ այդ դրսեցիներ իրենց աչքին՝ ոտն տեղ չունեցող թափառաշրջիկներ լինելով, անոնց վրայ խեթ աչքով կը նայէին. երիտասարդութիւնը, որի ստուար մեծամասնութիւնը երկրին մէջ չլինելով, մի քանի ցանցառ ներկայացուցիչներ միայն ունէր այնտեղ, նա ալ փայլուն յոյսերի շուռով իրագործուիլը չտեսնելով և դրսեցիների սկզբնական սխալներէ վրդովուելով, սկսած էր հեղնել անոնք և ըսկեպտիկ դառնալ։ Եթէ չհաշուենք Հաֆթուանցի մի քանի պատանիներ, որոնք իրենց հասակի պատճառով աւելի տրամադիր էին ոգևորուելու, և որոնք իրենց հայրերի գժգոհութեան հակառակ տեսնուիլ կը փափաքէին օտարական կաշախների հետ, Սալմասը մի անտարբեր, եթէ չասենք թշնամի, հողէր նորեկների համար։

Յետադարձ շրջան մ'էր այդ ժամանակ Սալմասի համար։ 91 թուականին, դրսեցի երիտասարդների անսովոր թըլով գալը, շարժումները, զրոյցները, ցոյցերը, թեմական տեսչութեան պաշտօնի մը ստեղծուիլն, վանք մը վերականգնելու ջանքերը, մի անսովոր ոգևորութիւն առաջ բերած էին Սալմասի մէջ և տեղացին ենթարկուելով դրսի մղման, ինքն ալ կերեցուներ թէ կը մասնակցի շարժումին։ Բարեգործական Ընկերութիւն մը հաստատուեցաւ, այլ և այլ գիւղերի իբր միութեան կապ, հանգանակութիւններ եղան վանքի համար, օտարականներին հիւրասիրութիւն ցոյց տրուեցաւ, բայց երբ ադոնց վրայ դրուած իրաւացի կամ անիրաւ յոյսերը չիրագործուեցան և ժողովուրդը ադոնց մի քանի սխալներէ նիւթական վնասներ կրեց, իսկոյն ադոր տրամադրութիւնը փոխուեցաւ։ Եկաւ 93-ի դժգոհ կամ անտարբեր վիճակը։ Բարեգործական Ընկերութիւնը այլ ևս լուծուած էր, վարժարանները աւելի վատ դրութեան վերադարձած, թեմական տեսչութենէն ալ կրթական մի լաւ հետք չէր մնացած։ Միւս կողմէ Դավրէժի առաջնորդական աթոռը թափուր կը մնար. տեղական նշանակուած ծերունի Խաչատուր վարդապետի թոյլ պաշտօնավարութիւնը կասեցաւ հակապատկերն էր հանգուցեալ Մխիթարեան սրբազանի տենդոտ և շըրնդալից գործունէութեանը։

Սալմասի հայը մի տարի հասարակական գործունէութեան հոսանքի մէջ ձգուելով լողալ եաք, յոգնած, վախցած դէպի ափը շտապեր և ցամաք ելնելով, իր անհատական կղզիացած կեանքին մէջ քաշուեր, կծկուեր էր։

Կանգնեցունել այդ յետադարձ շարժում, ժամանակակից գաղափարներին և շարժումներին հաղորդակից անել Սալմասի և մօտիկ գաւառների անտես ունուած հայութիւնը, ներգործական մի դեր առնելու վարժեցունել զինք հանրային գործի մէջ և վերջապէս տեղացիների ու դրսեցիների մէջև մտերմութեան, գործակցութեան պայմաններ ըստեղծել, ասոնք պիտի լինէին ի հարկէ դիտող և զգացող գործիչների անմիջական հոգածութեան առարկայ։ Երկրին այդ վիճակ ինձ ալ պարտաւորեցուց կանգ առնել այնտեղ առ ժամանակ և իմ բաժին բեռ վերցունել այդ ծանր աշխատութեան մէջ։

—

Այն գործ, որ կարող էր այն ժամանակ, և դեռ այժմ ալ, անմիջական յարաբերութեան մէջ դնել դրսեցին տեղացու հետ՝ կրթական գործն էր. այդ թուականին չափէ աւելի երեսի վրայ թողուած էին վարժարանները և Կովկասէն եկած ուսուցիչները կենդրոնացած Դավրէժի մի վարժարանի մէջ, իրենց ամրան արձակուրդին միայն կը տեսնէին Սալմասը։ Կրթական գործն ալ ընդհանուր յետադարձ վիճակի հետևանքը կը կրէր։ 91—92 թուականին, նախակրթական ուսում, բայց եռանդ ունեցող գոնէ 2-3 երիտասարդներ Հաֆթուանի և Կալասարի վարժարաններին կենդանութիւն մը. կուսային, բայց 93-ի մէջ ադոնք ալ չկային. Դավրէժի Սէր ընկերութիւնն այդ քաղաքի միսիոնարական վարժարանէ աւարտած մի երիտասարդ իր ծախքով զրկած էր Մահլամ գիւղը, բայց 92—93-ի շրջանէն եաք այդ նպաստ ալ չէր կրնար շարունակել, 7 գիւղերի մէջ վարժարաններ կային բաց, բայց ադոնցմէ Մահլամինը, ինչպէս և Սավրանը պիտի գոցուէին, տեղացիները չուզելով տարին 80 ռուբլի վճարել վարժապետին։ Այդ բոլոր վարժարանների մէջ միդասեան վարժարանի ուսման ընթացքէն ալ պակաս մի ընթացք կը շարունակուէր. ուսուցիչները իրենք, տարրական ուսում, ոմանք մի քիչ աւելի բարձր նախակրթութիւն ունէին. որոշ թոշակ չկար նշանակուած, առհասարակ խանութի պէս կը նայուէր ուսումնարանը և ամեն շաբթու աշակերտներ կրնային աւելնալ և պակսիլ, իրենց եկած ամսի համար միայն 15—25 կոպէկի մօտ ամսական վճարելով։ Այդ ժամանակ 260 կը լինէր բոլոր Սալմասի աշակերտների թիւը, ամենէն շատ յաճախուած ձմեռնային ամիսը. Զատկէն ետք կը ցրուէին։ Միջին հաշուով վեց ընտանիքի վրայ 1 աղայ կար վարժարան եկող։

Կային բացուած ամերիկեան-երիցական միսիոնարութեան և կաթոլիկ միաբանութիւնների 5 նախակրթարաններ, երկուսը գիշերօթիկ, բայց դեռ այդ առաքելութիւններ իրենց գործունէութեան սկզբին մէջ էին, 10 տարի հաղիւ լինելով իրենց Սալմաստ գալը։

Սակայն ի՞նչպէս և ի՞նչ միջոցներով սկսել Սալմասի կրթական վիճակի բարեփոխումը և բարձրացումը։ Սալմաստ գաւառը հայաբնակ քաղաք կամ մի մեծ կենդրոն չունի. հայերը գիւղերի մէջ կապրին, 20 վերստ երկայն 15 վերստ լայն տարածութեան մը վրայ փռուած, 1504 տուն լինելով ընդամենը, 28 գիւղերի մէջ, որոնցից 12-ը միայն 40 տունէ վեր հայ բնակիչ ունին, իսկ մնացածները 5—20 տուն ունին, խառն՝ թիւրք, քիւրդ, ասորի տուների հետ։ Այդ ցրիւ վիճակ ի հարկէ երբէք չէր նպաստեր այժեր գտնէ մի տեղ հաւաքելու և մի լուրջ բան անելու։ Ցիշեալ 12 գիւղէն դուրս, միւս փոքր գիւղերի մէջ վարժարանների խօսք չէր կրնար լինել, սակայն 40 տնէ աւելի բազմամարդ գիւղերն գոնէ ունէին ուէ մի պատրաստութեամբ վարժապետ, կրթական աւելի բարձր մի հիմնարկութեան համար։

Սալմասի ոչ մի գիւղի եկեղեցին իր համար աչքի զարնող դրամագլուխ և հասութաբեր կարեւոր մի կալուածք չունի. բոլոր 15 եկեղեցիների դրամի գումարը 1600 ռուբլիէն չանցնիր, մաս մը պատրաստ, մաս մ'ալ անորոշ տեղեր. իսկ արա, պարտէզ, բոլորը միասին 50 ռուբլի է, աւելի տարեկան հասոյթ չեն բերեր։

Դրամագլուխներ չլինելով, կը մնար յոյս դնել գիւղացիների աշակցութեան վրայ, իսկ ադոնց տալիքին վրայ մի գաղափար կազմելու համար, կը բաւէ ցուցնել որ Հավթուան (310 տուն զուտ հայ) ամենամեծ գիւղը, ամենաշատ տրուած տարին, 80 թուականէն (150 ռուբլի) աւելի չէ տուած վարժարանի, այդ գումարն ալ երկու ուսուցչի վրայ բաշխելով. Փայտաճուկ (226 տուն զուտ հայ) 70 թուական տուած է երկու ուսուցչի, աշակերտների ամսական տուրքերով, Մահլամ (176 տուն զուտ հայ) տարեկան 40 թուական ալ չէր կրցած տալ Սէր ընկերութեան ղրկած ուսուցիչը պահելու համար, Սավրա՝ նոյնպէս, Կալասար (վաճառականների գիւղը, 45 տուն զուտ հայ) 100—120 թուական ծախք ըրած էր 91—92 թուականներին իր վարժարանի մէջ երկու ուսուցիչ պահելով, 93-ին 40-ի իջեցուցած էր այդ ծախք, սակայն նա կրնար և յօժար էր դարձեալ տալու առաջինի չափ։ Ուրեմն բոլոր Սալմաստ 330 թուական (մօտ 600 ռուբլի) տարեկան մի հասոյթ, կրթական աւելի բարձր

բաւականութիւն տուի զեկուցումների մէջ յիշատակուած գժգոհութիւններին։

—

Կ. ՊՕԼՍԻՑ մեզ գրում են. «Մեր խնդիրը վերսին սկսաւ իւր զլուխը ցոյց տալ իւր բունից, շաբաթ օր՝ 24 Յունիս, երբ գնացանք վերջնագիր մի տուել են Բ. Դրան 10 օր պայմանաժամով, առանց փոփոխութեան նախկին ծրագիրն ընդունելու, վասն զի նոր նախարարապետն (Սալզպուրի) ևս նոյն կամքը յայտնել է, թէ օսմանեան դեսպանին հետ խօսելով Լէնդօն և թէ աստ հեռագրելով։

Սասնոյ քաջարանց մնացորդք անօթութենէ և սովէ ի մահ կը մատնուին, և սոսկալի բան, որ կառավարութիւնը սուտ կը հանէ զայն, այն ինչ պատրիարքարան թուղթ եկած և յայտնէ յանուանէ նշանակուած է սովամահ եղելոց անձերն։ Ազգային վարչութիւնն որոշեց թղէ թղաղ հանգանակութիւն անել ս. Պատրիարքի կոնդակաւ և ժապաւենաւ տարակներով, Բ. Դուռը լսելով զայս՝ մարդասիրաբար կը գրէ ի պատրիարքարան, թէ հարկ չկայ այդպիսի հանգանակութիւն անելու, քանզի Վեհ. Սուլթանը իւր հպատակաց պէտք եղած օգնութիւնը կը հասուցանէ. բայց ս. Պատրիարքը ըստ որոշման կրօնական և քաղաքական ժողովոց պատասխան գրեց, թէ մեզ համար շատ տխուր ստուգութիւն է՝ որ Սասնոյ հաւք սովամահ կը լինին, և ահա ձեզ կը ներկայացնենք այդ թշուառների անունները, մեր կրօնական պարտաւորութիւնն է այդ անօթիներուն հաց, ծարաւիներուն ջուր և մերկերուն հագուստ մատակարարել, ուստի կը խնդրենք որ կառավարութիւնն էլ իւր շնորհքը չզլանայ նոցանից, և անընդհատ կը շարունակուի հանգանակութիւնը։»

—

Կ. ՊՕԼՍԻՑ հեռագրում են. «Զերնոմ. Վեսանիկին».— Բ. Դուռը ամբողջապէս զրաղուած է մակեդոնական ապստամբութիւնը ճնշելու գործով, որ խրախուսում է հարևան վասալ իշխանութիւնների կողմից։ Այս հանգամանքն էական ազդեցութիւն է ունեցել հայկական խնդրի լուծման վրայ։ Պետութիւնները հաստատ են իրենց պահանջների մէջ, անկասկած է, որ Դուռը ստիպուած կը լինի ենթարկուել նրանց։

—

ԴՐԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՀԵՌԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ

1828 թուին իշխան Մետտերնիխը ասաց.

«Ես գիտեմ և դրականապէս համոզուած եմ, որ փոխարինը հեռացնելու և պետութեան գոյութիւնը ապահովելու միջոցները տակաւին սուլթանի ձեռքին են, բայց ես նոյնպէս գիտեմ, որ նա նրանցից չի օգտուիլ, նա խորհուրդների չի լսում. հետևաբար ոչ թէ խորհուրդները, այլ ազէտները կարող են այդ պետութեան վիճակը որոշել»։

Այս խօսքերի մէջ այնքան թարմութիւն, այնքան ժամանակակից ճշմարտութիւն կայ, որ կարծէք հէնց երէկ է ասուած, կարծէք հէնց հայկական խնդիրն է եղել այդ խօսքերն արտասանելու շարժառիթը։

Երբ յունական խնդիրը բարձրացաւ, օսմանեան պետութիւնը չկամեցաւ իւր քրիստոնեայ հպատակների մարդկային իրաւունքները ճանաչել, չուզեց նրանց տարրական պահանջներին դոհացում տալ. կատարելապէս նրա ձեռքին էին բոլոր միջոցները, որոնցով կարող էր փոխարինը հեռացնել։ Բայց նա չօգտուեց այդ միջոցներից։ Եւ ինչ եղաւ հետևանքը։ Եթէ Թիւրքիայի այսօրուայ դիպլոմատներն այդ մոռացել են, մենք չենք մոռացել։

Ապա Բալքան թերակղզու սլաւոն ազգերի խնդիրը բարձրացաւ։ Եւրոպան բարեկարգութեանց այն մենիմումը պահանջեց, որով կարելի էր մասամբ ապահոված համարել Թիւրքիայի հպատակ սլաւոն ազգերի կրանքը, գոյքը, պատիւը։ Թիւրքիան չուզեց յետ նայել, չուզեց անցեալի փորձից օգուտ քաղել. բաշիբուզուքների խումբեր տարածելով Բոլգարիայում սկսեց սարսափելի կոտորած։ Եւ վերջն ստիպուած եղաւ ոչ միայն այն տալ, ինչ որ սկզբում պահանջում էր Եւրոպան, այլ շատ աւելի։ Դրա հետ միասին նա պատերազմական ահռելի ծախքեր ունեցաւ, մեծագումար պարտքի տակ ընկաւ, պետութիւնը ֆինանսապէս բոլորովին քայքայուեցաւ։

Հէնց այդ ողբալի դրութեան մէջ Թիւրքիայի առաջը զրուեցաւ հայկական խնդիրը։ Եթէ փոքր ինչ խոհեմութիւն, աշխարհութիւն ունենային Դրան դիպլոմատները, եթէ նրանք ընդունակ լինէին մօտաւոր անցեալից խրատուելու, պատմութեան տուած դասերին ուշ ու միտ դարձնելու, վերջապէս եթէ իրանց պետութեան իրական շահերն ըմբռնելու կարող լինէին, խնդրն եթէ պիտի վերջացնէին այդ խնդիրը։ Պիտի վերջացնէին՝ կատարեալ հնարաւորութիւն տալով հային՝ սուլթանի գերիշխանութեան տակ իւր սեպհական հայրենիքի վրայ եւրոպական քաղաքակրթութեան բարիքները վայելելու։

Այդ էր պահանջում իրերի դրութիւնը, առողջ դատողութիւնը և Օսմանեան պետութեան շահը։

Բայց ինչ արին Թիւրքիայի դիպլոմատները։

Հէնց որ գլուխ բարձրացրեց հայկական խնդիրը, նրանք որոշեցին ընաջինջ անել հայերին և դրանով ազատուել հայկական խնդրի պլսայուանրից։

Եթէ մինչև Բերլինի դաշնադրութիւնը սպանութիւնները, կողոպուտը, թալանելը, ժողովրդին հարբուսահարելը, նրա ընտանեկան և հասարակական սրբութիւնները՝ սրբելը անկարգ և անկերպարան կերպով էր կատարուում, այժմ սկսեցին այդ ամեն չարիքները որոշ սիստեմի ենթարկել։

Ցայտնի չարագործներ, որոնք ամեն մի փոքր ի շատ բարեկարգ ապրութեան մէջ կախաղան կը հանուին կամ հեռաւոր, անմարդաբնակ տեղեր ցմահ տաժանակիր աշխատանքի կը դատապարտուին, Հայաստանում կառավարիչներ և դատաւորներ նշանակուեցան։

Տէրութեան խրախոյսներով և օժանդակութեամբ քուրդերից զինուորական գնդեր կազմուեցան, որոնք ի պաշտօնէ կոչուած են հայերին ընաջինջ անելու։

Հարկերը գժոխային կերպարանք ստացան. գժոխային կերպարանք ստացան երկրի մէջ տիրող բոլոր կարգերը։

Եւ ինչ է այսօր այդ թշուառ երկրի դրութիւնը Բերլինի դաշնագրին սարսռազդեցուց 17 տարի յետոյ. մի դրութիւն, որպիսին չէ տեսել ընդհանուր պատմութեան մէջ ոչ մի երկիր, մի դրութիւն, որպիսին չէ տեսել նոյն իսկ այդ ժողովրդի տարիգրութիւնը։

Կոտորում են, կողոպտում են, անարգում են, բանտարկում և աքսորում են, որոնք կարող են, փախչում են հայրենի երկրից. փախչում են, ինչպէս մարդ իւր սեպհական տնից կը փախչի, երբ այն՝ հրդեհով բռնուի։ Իսկ երբ պանդխտութեան մէջ հայրենիքի կարօտը դէպի յետ, դէպի հայրենի մոխրակոյտերն է քարշում նրանց, արդէն սահմանն անցնելիս՝ նրանք չարաչար մահուան են արժանանում։ «Հայրենիքից կարող էր հեռանալ, բայց հայրենիք վերադառնալ՝ երբէք», ասում է նրանց Թիւրք կառավարութիւնը։

Եւ այս պէս վարում են այն աշխատասէր հայ ժողովրդի հետ, որին շատ անգամ հեռաւոր թագաւորներ ու իշխաններ ընդարձակ իրաւունքներ և արտօնութիւններ տալով՝ իրանց երկիրներն են հրաւիրել, արհեստներն ու վաճառականութիւնը զարգացնելու նպատակով։

Այդպիսի դրութեան մէջ Սասունի արհաւիրքը բացառիկ երևոյթ չէ, այլ տիրապետող կարգերի հարազատ ծնունդը։ Հինգ հարիւր տարի է, և ամեն օր Հայաստանում Սասուն կայ՝ մեծ կամ փոքր ծաւալով։ Սասունը հրդեհուող հայ երկրից բարձրացած մի բարեփոխութեան հիմ լինել։

—

Կրթական վերածնութեան շարժում մի բանալին կրնար ուրեմն գտնուիլ կրթութեան կամաւոր զինուորների մօտ. այդպիսի զինուորներ, չաքաշ ապրուստով բաւականացող առաքեալներ միայն կրնային առանց նիւթական միջոցների նուազութիւնը նկատի առնելու, գործը սկսել, և բարեբաղդաբար Սալմասը ունեցաւ մի քանիսը։

Այդ թուականին, 93-ի աշնանը, կը բացայայտուեցան երկու երիտասարդներ, միջնակարգ վարժարանէ ելած, որոնք յանձն առին առաքելութիւնը սկսել։ Անմատոյց գործունէութեան առաջ բերած վստահութիւնը տեղացիների վրայ նորէն եռանդի վերսկսում պատճառեց և դանոնք մղեց կրթական գործին մի կողմակերպութիւն տալու։ Վեց ամիս անցնելէ ետք, Սալմաստի գլխաւոր գիւղերի ներկայացուցիչները, 24 փետրվարին, կրթական գործի առիթով, իրենց մէջ միութեան մի կապ հաստատեցին և միաբան որոշումով թեմական տեսչութեան պաշտօն մը իրենց կողմէ հաստատելով, այդ պաշտօնն ալ ինձ յանձնեցին թեմական Առաջնորդի վաւերացումով։

94 մարտին—95 փետրվարի տարեկան տեղեկագիրս հաղորդած եմ թեմական առաջնորդ Գերապ. Սուքիաս Արքեպ. Պարվանցին և տեղը կը համարիմ յիշել որ Սրբազանը իմ կրթական ամեն ձեռնարկների քաջալերող հանդիսանալու և իր բարոյական ազդեցութեամբ արդէլ-կան թոշակ կուտար 7 վարժարանի 260 տղայի համար, 10 ուսուցչի վրայ բաշխելով։ Միսիոնարական վարժարանների գալով, անոնք դպրոցական թոշակ չէին պահանջեր աշակերտներէ, ձրի գիրք և թղթեղէն ալ կուտային անկարողներն։

Մի կողմէ Սալմաստի մէջ որքան ալ ապրուստ ծան լինէր, սակայն և այնպէս դրսեցի ուսուցիչների համար քաղաքէն քիչ կամ բնաւ դանդանութիւն կունենար ծախքը. իսկ տեղացի ուսուցիչ գտնէ՝ չկար, կային տարրական ուսում ունեցողներ, բայց ոչինչ մի օգուտ չէր կրնար սպասուիլ, իրենց մէջէն միայն 1—2 երիտասարդական տարիք ունեցողները կրնային յոյս տալ թէ կրնան մի բան սովորել և մի բանի պէտք գալ։ Ուրեմն պէտք էր արտասահմանէն ուսուցիչ գտնել, բայց կարելի էր անոնց ապրուստ ապահովող դրամ գտնել երկրին մէջ. վերի թիւերը ցոյց կուտան թէ այդ շատ կասկածելի էր։

Իսկ Դաւրէժը, Ատրպատականի առաջնորդարանը, պիտի հարցունեն ոմանք, միթէ չէին կրնար օգնել.—Անոնք ալ դժբաղդաբար նիւթական լայն վիճակի մէջ չեն եղած. Առաջնորդարանը իր սովորական հասոյթներով իր ծախքերը հազիւ թէ գոցէ. Դաւրէժի երկու վարժարաններն ալ արտակարգ միջոցների ստիպուած են դիմել իրենց տարեկան բացը գոցելու համար։

Գործերի այս դրութեան մէջ յայտնի կերևի որ արդէն եղած նիւթական միջոցներն ինքնին չէին կրնար որ ոչ մի բարեփոխութեան հիմ լինել։

—

Կրթական վերածնութեան շարժում մի բանալին կրնար ուրեմն գտնուիլ կրթութեան կամաւոր զինուորների մօտ. այդպիսի զինուորներ, չաքաշ ապրուստով բաւականացող առաքեալներ միայն կրնային առանց նիւթական միջոցների նուազութիւնը նկատի առնելու, գործը սկսել, և բարեբաղդաբար Սալմասը ունեցաւ մի քանիսը։

Այդ թուականին, 93-ի աշնանը, կը բացայայտուեցան երկու երիտասարդներ, միջնակարգ վարժարանէ ելած, որոնք յանձն առին առաքելութիւնը սկսել։ Անմատոյց գործունէութեան առաջ բերած վստահութիւնը տեղացիների վրայ նորէն եռանդի վերսկսում պատճառեց և դանոնք մղեց կրթական գործին մի կողմակերպութիւն տալու։ Վեց ամիս անցնելէ ետք, Սալմաստի գլխաւոր գիւղերի ներկայացուցիչները, 24 փետրվարին, կրթական գործի առիթով, իրենց մէջ միութեան մի կապ հաստատեցին և միաբան որոշումով թեմական տեսչութեան պաշտօն մը իրենց կողմէ հաստատելով, այդ պաշտօնն ալ ինձ յանձնեցին թեմական Առաջնորդի վաւերացումով։

94 մարտին—95 փետրվարի տարեկան տեղեկագիրս հաղորդած եմ թեմական առաջնորդ Գերապ. Սուքիաս Արքեպ. Պարվանցին և տեղը կը համարիմ յիշել որ Սրբազանը իմ կրթական ամեն ձեռնարկների քաջալերող հանդիսանալու և իր բարոյական ազդեցութեամբ արդէլ-

---

*) Այս և վերի երկու թուերը տարեկան տեղեկագրիս մէջ յիշած թուերէս 100-ին 5 տարբերութիւն մը կրնան ունենալ, քանզի պատրաստ չլինելով վիճակագրական ցանկերը։

ներ, որքան կարելի էր, հարթելու մասին, ամեն աւելիով յօժարամտութիւն ցոյց տուաւ։

94—95 տարեշրջանին, Սալմաստ իր ուսուցիչների մէջ ունեցաւ 3 միջնակարգ կրթութիւն առացող, 5 երկդասեան ուսումնարանի ընթացքի ատիճան ուսում ունեցող, մնացածներն 8 անձ, տարրական ուսման տէր։ Կրթական տարեկան ծախքը 950 թումանի բարձրացաւ, մի օրիորդական ուսումնարան ուելցաւ, աշակերտների թիւն ալ 420-ի հասաւ։ Դպրոցական շէնքերի, նորոգութեան, կարասիքի համար ժողովուրդը տուաւ 400 թումանի մօտ մի գումար *)։ Վարժարաններէն՝ հավթուանինը 5 տարուան դասընթաց ունի, երկդասեան ուսումնարանի ծրագրին վրայ ունենալով Հայաստանի պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան և մաթեմատիկայի դասերը։

—

Ես այստեղ յարմար չեմ համարեր ակէ աւելի երկար գրելու այդ շրջանի մէջ ձեռք բերուած արդիւնքի վրայ և կը թողում որ ապագան աւելի որոշ ճշդէ ադոր իրական արժէքը իր բարոյական և ուսումնական հետևանքների մէջ. սակայն հարկ կը համարիմ մի քանի տող աւելի գրել, ցուցնելու որ այդ թարանշանները իսկ ոչ բաւական են Սալմաստի համար և ոչ իսկ այդքանը ապագայի համար ապահովուած։

Սալմաստի 28 հայաբնակ գիւղերի մէջ 8957 հոգի հայ կայ 1895-ի վիճակագրութեանս նայելով. այդ թուի մէջ 780 մանչ և 505 աղջիկ տղայներ կան 8—14 տարեկան հասակի, որ նախակրթութեան տարիքն է. այդ երկուսի գումարը 1285 լինելով, կը տեսնուի որ դպրոցական հասակի տղայների միայն մէկ երրորդը ուսումնարան կը յաճախէ. նոյն իսկ 40 մանչ աւելի հայ ունեցող 12 գիւղերի՝ 8—14 տարեկան հասակի տղայներէն 600 տղայ (դուրս հաշուելով նաև միսիոնարական վարժարանների մէջ այդ շրջանի մէջ յաճախող 60—70 տղայներ) կը մնան առանց ուսման, այլ և այլ պատճառներով. մի տեղ վարժարան չկայ, մի ուրիշ տեղ վարժարանի սրահներն և կարասիք անբաւական են նոր տղայ ընդունելու, շատ տղայներ ալ ոչ թէ թոշակ տալ, թղթեղէնի և գրքի գրամ ալ տալ չեն կրցած կամ չեն վարժուած տալու և չեն գար վարժարան։ Ալ չենք խօսիր Որմիայ գաւառին 800 տուն և Խոյի 250 տուն հայ բնակիչների մասին, ուր ամեն մէկ գաւառին միայն մէկ միդասեան վարժարան կայ։ Որմիայ մէջ վիճակը աւելի ևս ցաւալի է անով, որ հայերի մի մեծ մասը իր լեզուն մոռցած, քահանային հետ, եթէ ունի, մէկտեղ թրքերէն կը խօսի։

Մենք ասինք նաև որ ներկայ եղածն ալ ապահովուած չէ գալ տարիներ ունենալ Սալմաստի մէջ. այժմ ինչ որ կը լինի, ուսուցիչների անհատական զոհաբերութեան վրայ հիմնուած է. ադոնց ամենէն բարձր թոշակ տարեկ. 120 ռ. է. և եթէ եղածներն ալ որևէ, նոյն իսկ իրենցմէ անկախ մի պատճառով չկարենան շարունակել իրենց պաշտօն, այդ գումարով ուսուցիչ հրաւիրել ուրիշ տեղէ անգործնական մի հրաւէր կը լինէր։ Տեղ տեղ ալ ուսուցիչը օգնական չունենալով, իր կարողութենէ վեր բեռ ստանձներ է, մի բան որ մէկ երկու տարիէն աւելի չկրնար շարունակուիլ, առանց ուսուցչի առողջութեան վրայ ծանր հետևանքներ թողնելու։

Ժամանակ չէ ուրեմն, որ Կովկասի և արտասահմանի մէջ այն անձեր և հիմնարկութիւններ, որոնց փափագ կամ բարոյական պարտականութիւնն է՝ բնիկ երկրի մէջ, քաղաքակրթութենէ հեռի անկիւններն մնացող իրենց արիւնակիցների վերականգնմանը՝ ձեռք երկնցունել, այդպիսիներ փութան նպաստել, օգնել անհատները սկսած գործին, քանի դեռ այդ երկրի մէջ կրթական գործի համար արտաքին դժուարութիւններ չկան։

Օգնելու շատ եղանակներ կան. կարելի է դասագիրք և թղթեղէն ուղարկել աղքատ ուսանողներին բաշխելու, դպրոցական դասական առարկաներ նուիրել (դասագրքերի համար ի հարկէ օգտակար կը լինէր որ նուիրատուներ մի երկուսով նախապէս դիմէին, թեմական տեսչութեան ի Սալմաստ և իմանային այն դասագրքերի անունները, որոնք յարմար կը լինէին Սալմաստի վարժարաններին և միևնոյն ժամանակ անկէ կիմանային ում յանձնել, իրենց աւելի մօտիկ մի տեղի, մի անձի)։

Նոյնպէս եթէ կան այնպիսի կրթասէր անձեր, որոնք ուզեն այս կամ այն գիւղի վարժարանին մասնաւորապէս նպաստել, կամ մի առանձին վարժարան պահել իրենց հաշուին (մէն մի միդասեան վարժարանի համար Սալմաստի, Որմիայ և Խոյի մէջ 160 ռուբլի կը բաւէ, չհաշուելով չէնքի և կարասիքի ծախքը), այդ բանի համար ևս կարող են դիմել թեմական-տեսչին և իրենց ուզած աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալ։

Իսկ ամենէն աւելի ներկայի զգալի պահանջն է ունենալ Սալմաստի մէջ մի կենդրոնական վարժարան. եղած վարժարաններէ մին, օրինակ հավթուանինը, որ ամենէն յառաջացածն է 2 դասարան ևս բարձրացունել և այդ կերպով ունենալ բուն իսկ Սալմաստի մէջ մի հիմնարկութիւն, որ տեղացիներէ գիւղական ուսուցիչներ պատրաստէ, որոնք իբր նոյն երկրացի, մօտ ապագայի մէջ, 2—3 տարիէն, մօտակայ գիւղերի համար ուսուցիչներ կրնան լինել, աւելի ածան պայմաններով և աւելի տեսական ժամանակով։ Տեղացի ուսուցիչներ ունենալէ ետք, Սալմաստի կրթական գործը կրնայ ապահովուել։

Ազգիս Վեհ. Հայրապետը Իւր մասնաւոր ուշադրութիւն դարձուցեր է արդէն Սալմաստի մէջ կենդրոնական մի վարժա-

---

ԿԵՐԱՍՕՆԻՑ մեզ գրում են. «Թուսիա երթալու համար հայերին անցագիր տալը բոլորովին արգելուած է»։

* * *

Յուլիսի 3-ին Բօրժօմ տանող երկաթուղու ամարային գնացքը լի էր Թիֆլիզի հասարակութեան ամեն դասակարգի բազմաթիւ ներկայացուցիչներով, որոնք ուղևորուել էին քաղաքիս Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմաւորելու։

* * *

ՄԻԽԱՅԼՈՎԻՑ մեզ հաղորդում են որ յուլիսի 3-ին այնտեղ է ժամանել Զամխու թեմի առաջնորդ Մակար եպիսկոպոսը Նորին Վեհափառութեան դիմաւորելու։

* * *

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են.

«Նորին Վեհափառութեանն ընդունելութեան ատիթով կազմուած յանձնաժողովը եռանդագին պատրաստութիւններ է տեսնում արժանավայել կերպով Նրան ընդունելու։ Նորին վեհափառութեան իջևանելու համար պատրաստում է Կարապետեան դպրոցը։ Դպրոցի բակում, նոյնպէս և քաղաքի մուտքում—ճիրիթմէյդան հրապարակում շքեղ կամարներ են շինում։ Յուլիսի 2-ին կայացաւ ժողով, ուր ընտրուեցան երեք պատգամաւոր Նորին Վեհափառութիւնը Բօրժօմում ընդառաջելու և ուղեկցելու Նրան մինչև Ախալցխա։ Ընտրուած պատգամաւորներն են. պ. պ. Կարապետ Մարուքեան, Առաքել Մելքոնեան, Յարութիւն Աղնաուրեան։ Ժողովին ներկայ էին և հայ կաթոլիկները. սրանք նոյնպէս ցանկութիւն յայտնեցին իրանց մէջից մի պատգամաւոր ընտրելու և ուղարկելու Նրան իրանց կողմից Նորին Վեհափառութեանն ընդառաջելու և Նրա գալուստը շնորհաւորելու»։

* * *

Կ. ՊՕԼՍԻՑ մեզ գրում են հետևեալը.

«Ի տօնի ս. Թարգմանչաց Իրմիրեանց կտակի մրցանակի 45 օսմանեան ոսկին յատկացաւ Դիւտ քահ. Ազանեանցի աշխատասիրած «Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանին (Դիւան Հայոց պատմութեան, գիրք Դ.) առաջի հանդիսաւոր ժողովելոյ ընդ նախագահութեամբ ս. Պատրիարք Հօր»։

* * *

«Զերնոմսրսկ. Վեսանիկին» Պետերբուրգից ուղղուած հեռագրից երևում է, որ խնդիր է յարուցուած Բաթումի քաղաքապետութիւն հաստատել, որով և Բաթումը ինքնուրոյն վարչական մարմին դարձնել։

* * *

«Բիրժ. Վեդոմոստի» լրագրից քաղելով՝ հաղորդում ենք գեղատնային նոր կանոնադրութիւնը։ Գեղատնային նոր կանոնադրութեան ծրագիրը, որ զանազան քաղաքների գեղատնային ընկերակցութիւնների ձեռքին են, բայց ես նոյնպէս գիտեմ, որ նա նրանցից չի օգտուիլ, նա խորհուրդների չի լսում. հետևաբար ոչ թէ խորհուրդները, այլ ազէտները կարող են այդ պետութեան վիճակը որոշել»։

Այս խօսքերի մէջ այնքան թարմութիւն, այնքան ժամանակակից ճշմարտութիւն կայ, որ կարծէք հէնց երէկ է ասուած, կարծէք հէնց հայկական խնդիրն է եղել այդ խօսքերն արտասանելու շարժառիթը։

Երբ յունական խնդիրը բարձրացաւ, օսմանեան պետութիւնը չկամեցաւ իւր քրիստոնեայ հպատակների մարդկային իրաւունքները ճանաչել, չուզեց նրանց տարրական պահանջներին դոհացում տալ. կատարելապէս նրա ձեռքին էին բոլոր միջոցները, որոնցով կարող էր փոխարինը հեռացնել։ Բայց նա չօգտուեց այդ միջոցներից։ Եւ ինչ եղաւ հետևանքը։ Եթէ Թիւրքիայի այսօրուայ դիպլոմատներն այդ մոռացել են, մենք չենք մոռացել։

Ապա Բալքան թերակղզու սլաւոն ազգերի խնդիրը բարձրացաւ։ Եւրոպան բարեկարգութեանց այն մենիմումը պահանջեց, որով կարելի էր մասամբ ապահոված համարել Թիւրքիայի հպատակ սլաւոն ազգերի կրանքը, գոյքը, պատիւը։ Թիւրքիան չուզեց յետ նայել, չուզեց անցեալի փորձից օգուտ քաղել. բաշիբուզուքների խումբեր տարածելով Բոլգարիայում սկսեց սարսափելի կոտորած։ Եւ վերջն ստիպուած եղաւ ոչ միայն այն տալ, ինչ որ սկզբում պահանջում էր Եւրոպան, այլ շատ աւելի։ Դրա հետ միասին նա պատերազմական ահռելի ծախքեր ունեցաւ, մեծագումար պարտքի տակ ընկաւ, պետութիւնը ֆինանսապէս բոլորովին քայքայուեցաւ։

Հէնց այդ ողբալի դրութեան մէջ Թիւրքիայի առաջը զրուեցաւ հայկական խնդիրը։ Եթէ փոքր ինչ խոհեմութիւն, աշխարհութիւն ունենային Դրան դիպլոմատները, եթէ նրանք ընդունակ լինէին մօտաւոր անցեալից խրատուելու, պատմութեան տուած դասերին ուշ ու միտ դարձնելու, վերջապէս եթէ իրանց պետութեան իրական շահերն ըմբռնելու կարող լինէին, խնդրն եթէ պիտի վերջացնէին այդ խնդիրը։ Պիտի վերջացնէին՝ կատարեալ հնարաւորութիւն տալով հային՝ սուլթանի գերիշխանութեան տակ իւր սեպհական հայրենիքի վրայ եւրոպական քաղաքակրթութեան բարիքները վայելելու։

Այդ էր պահանջում իրերի դրութիւնը, առողջ դատողութիւնը և Օսմանեան պետութեան շահը։

Բայց ինչ արին Թիւրքիայի դիպլոմատները։

Հէնց որ գլուխ բարձրացրեց հայկական խնդիրը, նրանք որոշեցին ընաջինջ անել հայերին և դրանով ազատուել հայկական խնդրի պլսայուանրից։

Եթէ մինչև Բերլինի դաշնադրութիւնը սպանութիւնները, կողոպուտը, թալանելը, ժողովրդին հարբուսահարելը, նրա ընտանեկան և հասարակական սրբութիւնները՝ սրբելը անկարգ և անկերպարան կերպով էր կատարուում, այժմ սկսեցին այդ ամեն չարիքները որոշ սիստեմի ենթարկել։

Ցայտնի չարագործներ, որոնք ամեն մի փոքր ի շատ բարեկարգ ապրութեան մէջ կախաղան կը հանուին կամ հեռաւոր, անմարդաբնակ տեղեր ցմահ տաժանակիր աշխատանքի կը դատապարտուին, Հայաստանում կառավարիչներ և դատաւորներ նշանակուեցան։

Տէրութեան խրախոյսներով և օժանդակութեամբ քուրդերից զինուորական գնդեր կազմուեցան, որոնք ի պաշտօնէ կոչուած են հայերին ընաջինջ անելու։

Հարկերը գժոխային կերպարանք ստացան. գժոխային կերպարանք ստացան երկրի մէջ տիրող բոլոր կարգերը։

Եւ ինչ է այսօր այդ թշուառ երկրի դրութիւնը Բերլինի դաշնագրին սարսռազդեցուց 17 տարի յետոյ. մի դրութիւն, որպիսին չէ տեսել ընդհանուր պատմութեան մէջ ոչ մի երկիր, մի դրութիւն, որպիսին չէ տեսել նոյն իսկ այդ ժողովրդի տարիգրութիւնը։

Կոտորում են, կողոպտում են, անարգում են, բանտարկում և աքսորում են, որոնք կարող են, փախչում են հայրենի երկրից. փախչում են, ինչպէս մարդ իւր սեպհական տնից կը փախչի, երբ այն՝ հրդեհով բռնուի։ Իսկ երբ պանդխտութեան մէջ հայրենիքի կարօտը դէպի յետ, դէպի հայրենի մոխրակոյտերն է քարշում նրանց, արդէն սահմանն անցնելիս՝ նրանք չարաչար մահուան են արժանանում։ «Հայրենիքից կարող էր հեռանալ, բայց հայրենիք վերադառնալ՝ երբէք», ասում է նրանց Թիւրք կառավարութիւնը։

Եւ այս պէս վարում են այն աշխատասէր հայ ժողովրդի հետ, որին շատ անգամ հեռաւոր թագաւորներ ու իշխաններ ընդարձակ իրաւունքներ և արտօնութիւններ տալով՝ իրանց երկիրներն են հրաւիրել, արհեստներն ու վաճառականութիւնը զարգացնելու նպատակով։

Այդպիսի դրութեան մէջ Սասունի արհաւիրքը բացառիկ երևոյթ չէ, այլ տիրապետող կարգերի հարազատ ծնունդը։ Հինգ հարիւր տարի է, և ամեն օր Հայաստանում Սասուն կայ՝ մեծ կամ փոքր ծաւալով։ Սասունը հրդեհուող հայ երկրից բարձրացած

---

*) Այս և վերի երկու թուերը տարեկան տեղեկագրիս մէջ յիշած թուերէս 100-ին 5 տարբերութիւն մը կրնան ունենալ, քանզի պատրաստ չլինելով վիճակագրական ցանկերը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Յուլիսի 1-ից մինչև յունվարի 1-ը „Արձագանքին“ բաժանորդ գրուողը պէտք է հատուցանէ 6 ռուբլի։

«ԱՐՁԱԳԱՆՔ»-Ի ՀԵՌԱԳԻՐ

—

ԲՕՐԺՕՄ, 4-յուլիսի. Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Կաթուղիկոսը յուլիսի 1-ին առաւօտեան բարեհաճեց մեկնել «Նիկոլայ» շոգենաւով Թէօդոսիայից։ Բարի երթ մաղթելու համար մեծ հասարակութիւն էր ժողովուել։ Կերչի նաւահանգիստում Ամենայն Հայոց Հայրապետին դիմաւորեցին քաղաքապետը, ոստիկանապետը, խուռն բազմութիւն։ Հայ հասարակութիւնը ալ ու հաց մատուցեց։ Ամսոյս 3-ին, $3\frac{1}{2}$ ժամին շոգենաւով Փոթի ժամանեց։ Նաւամատոյցին Նորին Սրբութեանը դիմաւորեցին կառավարութեան ներկայացուցիչները, բազմաթիւ ժողովուրդ, քաղաքային ինքնավարութեան կողմից ներկայացուցիչներ և ամբողջ հայ հասարակութիւնը։ Քաղաքագլուխը մատուցեց Նորին Վեհափառութեանը մի ծաղկեայ փունջ, իսկ հասարակութիւնը ալ ու հաց։ Վաղօրօք շքեղ կառք էր պատրաստուած, որով Վեհափառը երթևեկելու կայարանը գնաց։ Նորին Օծութեանն հետևում էր խուռն բազմութիւն. օդը հոծ էր «կեցցէ» աղաղակներով։ Վեհափառն օրհնեց ժողովրդին և Հայոց եկեղեցի գնաց։ Կարճատև մաղթանքից յետոյ Նորին Սրբութիւնը խմաստալից քարոզ խօսեց. օրհնեց, խրախուսեց Իւր հօտին։ Այդտեղից անթիւ բազմութեան ուղեկցուած «կեցցէ»-ներով պ. Ջալալեանի տուն գնաց։ Պ. Ջալալեանի տանը Վեհափառի և Նրա շքախմբի համար վաղօրօք պատրաստութիւն էր տեսնուած։ Այսօր գիշերուայ 1 ժ. 5 րոպէին Նորին Վեհափառութիւնը ուղևորուեց դէպի Բօրժօմ։ Միխայլովում ընդ առաջ էին եկել բազմաթիւ անձինք։ Բօրժօմի կայարանում պաշտօնական կոնտորի կառավարիչը ներկայացաւ Նորին Վեհափառութեանը և խնդրեց իջևանել «Կավալերսկի» կոչուած ապարանքներում։ Վեհափառն ուղևորուեց և կեղեցի, ուր աղօթք կատարեց և օրհնեց ժողովրդին, որի բերկրանքն անսահման է։

* * *

«Կելեկիոյ Ամոռոյն Կաթուղիկոսական ընտրութիւնը, գրում են մեզ Պօլսից, կատարեցաւ կանոնաւորապէս յանձին Գրիգորիս եպիսկոպոսի Ալէքսեանի, մի քանի Սսոյ միաբան եպիսկոպոսներ, որք աքսորանքէ վերադարձած ի Պոլիս կը գտնուին, բողոքագիր կը տան Բ. Դրան՝ թէ այդ ընտրութիւնն ապօրինաւոր է, քանզի իրենք մասնակցած չէին (բանտէն—) այդ ընտրութեան, և թէ ապօրինաւոր է Էջմիածնի եպիսկոպոս մի Սիսի կաթուղիկոս ընտրել... Բ. Դուռն ալ ուրախանալով այս Բրգիշոյների վատութեան վրայ, կը գրէ ի Պատրիարքարան նոցա բողոքի մասին, բայց այնպիսի պատասխանն մի տըրուեցաւ՝ որ Բ. Դուռը ինքն էլ պիտի զարմանայ և ափշի. որովհետև 1871-ին Սսոյ Մկրտիչ կաթուղիկոսին ընտրութեան պայմաններն մեծ եպարքոս Ալի փաշայի գրաւոր հրահանգաց համեմատ եղած է, որոյ գէմ ինու ասելիք չունենար Բ. Դուռը, և պիտի խայտառակուին այդ տգէտ, ապերասան եպիսկոպոս անուանեալը։»

* * *

Փոթիից ուղեկցում է Նորին Վեհափառութեան թեմիս առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոսը։

* * *

ԿԵՐԱՍՕՆԻՑ մեզ գրում են. «Թուսիա երթալու համար հայերին անցագիր տալը բոլորովին արգելուած է»։

* * *

Յուլիսի 3-ին Բօրժօմ տանող երկաթուղու ամարային գնացքը լի էր Թիֆլիզի հասարակութեան ամեն դասակարգի բազմաթիւ ներկայացուցիչներով, որոնք ուղևորուել էին քաղաքիս Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմաւորելու։

* * *

ՄԻԽԱՅԼՈՎԻՑ մեզ հաղորդում են որ յուլիսի 3-ին այնտեղ է ժամանել Զամխու թեմի առաջնորդ Մակար եպիսկոպոսը Նորին Վեհափառութեան դիմաւորելու։

* * *

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են.

«Նորին Վեհափառութեանն ընդունելութեան ատիթով կազմուած յանձնաժողովը եռանդագին պատրաստութիւններ է տեսնում արժանավայել կերպով Նրան ընդունելու։ Նորին վեհափառութեան իջևանելու համար պատրաստում է Կարապետեան դպրոցը։ Դպրոցի բակում, նոյնպէս և քաղաքի մուտքում—ճիրիթմէյդան հրապարակում շքեղ կամարներ են շինում։ Յուլիսի 2-ին կայացաւ ժողով, ուր ընտրուեցան երեք պատգամաւոր Նորին Վեհափառութիւնը Բօրժօմում ընդառաջելու և ուղեկցելու Նրան մինչև Ախալցխա։ Ընտրուած պատգամաւորներն են. պ. պ. Կարապետ Մարուքեան, Առաքել Մելքոնեան, Յարութիւն Աղնաուրեան։ Ժողովին ներկայ էին և հայ կաթոլի

րությանց ներկայացուցիչների մասնակցությամբ ի նորոյ քննուեցաւ, ներկայացուցիչների ցուցմունքների համաձայն մի քանի փոփոխութեան ենթարկուեցաւ, և շուտով վերջնական կերպարանք ստանալով՝ պետական խորհրդին կը ներկայացուի։ Նախ յիշենք այն կանոնները, որոնք գեղատնային նոր կանոնադրութեան մէջ սահմանուած են նոր գեղատներ բաց անելու համար։ Մայրաքաղաքներում՝ Մոսկուա և Պետերբուրգ, ենթադրւում է նախկին դրութիւնը պահպանել, այսինքն 20 հազար բնակչի համար մի գեղատուն և մի գեղատան համար բաց թողած գիւղերի 30 հազար համար։ Այդպէս էլ այն քաղաքներում, որոնց բնակիչների թիւը 35 հազարից պակաս է, մի գեղատուն պիտի թողնուի։ Իւրաքանչիւր 6 հազար բնակչի և 7 հազար համարի։ Այն քաղաքներում, ուր բնակիչների թիւը 30 հազարից աւելի է, ենթադրւում է մի գեղատուն 10 հազար բնակչի և 15 հազար համարի։ Վերջապէս Օդեսայի, Կիևի, Խարկովի, Վարշաւայի և Թիֆլիզի համար, այժմեան դրութեան փոխանակ, որով մի գեղատունը 10 հազար բնակիչ և 15 հազար համար է ընդունում, ենթադրւում է այնպէս սահմանել, որ մի գեղատունը 20 հազար բնակիչ և 20 հազար համար ընկնի։ Այս քաղաքներում չափն աւելացնելը բացատրւում է նրանով, որ եկամուտները քիչ են, յաճախ ուղղակի անօգուտ է դառնում եղած գրութեան մէջ գեղատուն պահպանել։ Այս փոփոխութիւնների մէջ ուշադրութեան արժանի է և այն հանգամանքը, որ աւելի բարձր կրթական արտօնութիւն (ցնոզ) է պահանջւում այն մարդկանցից, որոնք կը ցանկանային գեղատնային աշակերտների կարգը մտնել՝ պրոփիզորի օգնականի կոչումն ստանալու համար։ Առաջ գիմնազիական դասընթացի չորրորդ դասարանից աւարտման վկայագիր էր պահանջւում, այժմ կը պահանջուի վկայագիր վեցերորդ դասարանից։

* * *

Նորերումս Պետերբուրգի նահանգական դատարանը հաստատեց ի կատար ածելու նախկին ելեւմտից նախարար, հանգուցեալ իսկ. գաղ. խորհ. Ի. Ա. Վիշնէգրադսկու կտակը։ Հանգուցեալ նախարարը իւր բոլոր կայքը կտակել է իւր ամուսնուն ցմահ, առանց իրաւունքի ծախելու կամ գրաւ դնելու, իսկ նրա մահից յետոյ բոլոր ժառանգութիւնն անցնում է հանգուցելոյ երեք դստերաց և մի արու զաւակին՝ հաւասարապէս։ Հանգուցեալ Վիշնէգրադսկին, նախ Պետերբուրգի տէխնօլոգիական ճեմարանի պրոֆէսոր էր, յետոյ յայտնի էր որպէս գործիչ զանազան մասնաւոր ֆինանսական երկաթուղեաց ընկերութեանց անդամ։ Նորին Վեհափառութեան այդ հոգածութիւնն ինքնին գրական մ'է թէ շուտով կրթասէր և հեռատես անձերի օգնութիւնը կը խմբուի և կը կազմակերպուի այդ ձեռնարկի համար։ Եւ քանի որ այդ հիմնարկութիւնն Ն. Վեհափառութեան մասնաւոր կամքի և դիտաւորութեան ծնունդը պիտի լինի, այդ մասին հաստատութեան ասկէ աւելին խօսիլ մեզ չպատկանիր առ այժմ։

Սալմաստ 5—6 տարի իր արտասահմանի եղբայրների օգնող ձեռքերին յենլէ ետք, ալ կը սկսի ինքնին միայնակ քայլել, քանի որ կրթութիւնը տարածուելով, ատոր պէտքն աւելի զգալի կը դառնայ։ Եթէ Սալմաստ այժմ ինքն իրեն չքաւէր, այդ ոչ թէ այնքան նիւթական անկարողութեան համար է, որքան այն բանի, որ նա դեռ անհրաժեշտ մի կարիք չհամարեր ուսումը և կրթութիւնը. իրեն միայն ճանչցնել, սիրել տալ պէտք է առարկան և նա ինքն անոր գին կը վճարէ։ Այո Սալմաստ իր նախակրթութեան համար 5—6 տարիէն ետք ինքն իրեն պիտի կարենայ բաւել և տեղիք ունիմ յուսալու, որ մի ժամանակ կը գայ երբ ինք իր աղքատ և աւելի խեղճ քոյրերի, Որմիի և Խոյի համար պիտի անէ նոյնը, ինչ որ այսօր արտասահմանի դրամն ու գործիչը իրեն համար կ'անեն։

—

Ներկայս վերջացնելէ առաջ, պարտաւոր եմ մի քանի խօսք ալ ասել այն յարձակումների մասին, որոնք Սալմաստի թեմական տեսչի դէմ եղան, որքան մեզ յայտնի է, երկու թերթերի մէջ։

Նախ կը ցաւիմ ասել, որ Սալմաստի թեմ. տեսուչը իր քննադատողներ չունեցաւ, այլ լոկ անուանարկողներ։ Եթէ լսէինք այնպիսի, թէկուզ կծու քննադատներ, որոնք հրապարակ հանէին թէ ինչ կարող էինք անել և չարինք, կամ ինչ սխալ մի քայլ ունեցանք կամ սխալ ուղղութիւն մուցինք վարժարանների մէջ, որմէ պէտք էր զգուշանալ կամ թերութիւններ, որոնք կընային ուղղուիլ մեր միջոցներով և մենք անհոգ եղանք, այդ ատեն մենք պիտի փութայինք օգուտ քաղել այդ դիտողութիւններէ։

Անոնք, որ առանց կանխակալ կարծիքի կարդացեր են այդ երբ թէ քննադատող յօդուածներ, նկատած կը լինին թերևս որ նոցա մէջ մասամբ մը միայն լոկ ընդհանուր գանգատներ կան կրթական վիճակի անբաւականութեան դէմ, իսկ աւելի մեծ մասամբ կը վիտան այլ և այլ ակնարկութիւններով այնպիսի իրողութիւնների մասին, որոնք կրթական գործի հետ կապ չունին. այդ ակնարկութիւններին այս թանդ սիւների մէջ մենք չենք կարող պատասխան տալ, բայց ժամանակին փութացեր էինք մեզ վրայ գրուած այդ ոչ-կրթական անվայել արարքների պատմութիւններին՝ ստոր զրպարտութիւն, անհիմն մեղադրանք և չարակամ խեղաթիւրումներ լինելը յայտնելու նոյն այն թերթերի միջոցով, որոնք տարած էին և դեռ կը տպեն այդ ստութիւններ, սակայն անոնց խմբագիրները թերևս ոչ ամբաստանեցան։ Դեսպանները առաջարկեցին Բ. Դրան «որոշ ժամանակամիջոցում» անպատճառ վճռական պատասխան տալ հայկական խնդրի համար։ Այդ «ժամանակամիջոցը» որոշուած չէ, բայց պահանջը կատարելապէս վճռական է և այս օրերս մի բան պիտի լինի։

Երէկ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցու գաւթի շինութեան մէջ տեղի ունեցաւ Ս. Սահակ-Մեսրոպեան մրցանակաբաշխութեան հանդէսը։ Հանդէս... ինչ ծաղրական բառ։ Սուգ ասելն աւելի քաղաքավարի կը լինէր։ Նոյն իսկ այդ զուտ գրական, անմեղ ժողովը մի առանձին սարսափով է տեղի ունենում։ Ոչ ձայն, այլ չշնչոց, ոչ ճառ, այլ ողբ, ոչ օրհնութիւն, այլ աղաչական մաղթանք։ Ցանձնաժողովը վճռել է մրցանակի գումարից 35 ոսկի յատկացնել Գիւտ քահանայ Աղանեանցին իբրև մրցանակ նրա «Գիւան հայոց պատմութեան» գրքի համար, իսկ մնացեալ 15 ոսկին յատկացնել գօկտոր Ցաղաւարեանին՝ նրա «Հայոց տառեր» աշխատութեան համար։

Սրբազան Պատրիարքը ներկայ էր հանդիսին և նախագահում էր։ Ինձ թըւաց թէ նա չէ խօսում, այլ արտասվում է հոգուց։ Բայց ոչքան գեղեցիկ է նրա խօսածը, ոչքան խելօք և ոչքան զգացմունքով լի։ Այդ առթիւ ես կը գրեմ յետոյ։ Առ այժմ ցտեսութիւն, վաղուան համար նոր Նամակ կ'ուղարկեմ։

Շնորհիւ ռուսաց հիւպատոսարանի, երէկ հետ ստացայ իմ գրքերս, որ գրաւել էր տաճկաց մաքսատունը, և յոյս ունիմ այսօր վաղն էլ ստանալ գրաւուած նամակներս։

VII *)

29 յունիսի, 1895.

Երեքշաբթի օրը, ամսոյս 27-ին, անգլիական դեսպան սեօր Ֆիլիպ Կերրին և ռուսաց դեսպան պ. Նելիդովն ամբանոցից Պօլիս եկան և յատուկ արագարգ տեսակցութիւն ունեցան մեծ վէզիրի հետ։ Ֆրանսիական դեսպան պ. Կամբոն չմասնակցեց այդ տեսակցութեան, որովհետև դեռ անկողնում պառկած հիւանդ է։ Իտալական կառավարութեան դեսպանը հրաւանք է ստացել իր կառավարութիւնից յայտնել, որ իտալական կառավարութիւնը միանում է երեք պետութիւնների հետ հայկական խնդրում և նրանց հետ միասին պահանջում է ռէֆորմների ծրագրի իրականացումը։ Այս հանգամանքը մեծ շփոթութիւն և երկիւղ է պատճառել տաճկական կառավարչական շրջաններում, մանաւանդ որ Պապի ներկայացուցիչը ևս հեռագիր է ստացել, որի մէջ ասուած է, թէ Հռովմի Պապը միացնում է իր ձայնը եւրոպական պետութեան ներկայացուցիչների ձայնի հետ հայկական խնդրում։

Կիլիկիոյ եպիսկոպոսների խնդիրը քիչ չէ մնասում բանակցութիւնների կանոնաւոր ընթացքին. տաճիկ կառավարութիւնը միշտ ուրախ է միջանկեալ երկրորդական խնդիրների վրայ բանակցութիւններ սկսելով ձգձգել կարևոր խնդիրը։ Այդ եպիսկոպոսների վրայ հընար եղաւ մի կերպ ազդել, միայն երկուսը դեռ յամառում են։

Մակեդոնիայից այսօր հասած լուրերին նայելով սուտ է, իբր թէ խաղաղութիւնն այնտեղ վերականգնուած է. մակեդոնացիք ոչ մի կերպ չեն ուզում ընկճուել և ընդհարումներ շարունակ տեղի են ունենում նրանց և տաճիկ զինուորների մէջ։ Բանտարկեալների թիւը հարիւրներով են։ Ցունասանի սահմանագլխի վրայ նոր նոր շարժումները շատ յաճախ են տեղի ունենում և յոյն ազգաբնակութեան գրգիռն օր ըստ օրէ աճում է։

Շնայելով որ տեղական զինուորական դպրոցի աշակերտներից և սօֆթաներից տաղին քանակութեամբ աքսորեցին, այնու ամենայնիւ չկարողացան դադարութիւն արմատախիլ անել։ սօֆթաների բանտարկութիւնները շարունակվում են աւելի խստաբար քան առաջ։

Բ. Դուռը մեծ իրարանցումի մէջ է. մի քանի օր է մնացել ուլտիմատումի ժամանակամիջոցին և նա ամենայն հնար գործ է դնում, որ «այդ բաժակն անցնի», բայց պահանջը կտրական է և խիստ։

Պատրիարքարանը ներկայ դէպքում շատ զգոյշ և խելացի ընթացք է բռնել —ոչ մի բանակցութիւն չանել, մինչև դեսպանների պատասխան ստանալը։

Ս. Հախումեան։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

—Ֆրանսիական յայտնի մատենախօս Ժիւլ Բրիվուա Ալֆոնս Դոդէի գրուածքների մանրամասն մատենախօսութիւնն է կազմել, Essai de bibliographie des oeuvres de M. Alhonse Daudet» վերնագրով։ Այս աշխատութեան մէջ հեղինակը Ֆրանսիացի վիպագրի գրական աշխատութիւնների մանրամասն նկարագրին է տալիս, և բացի դրանից նրա տակաւին լոյս չտեսած աշխատութիւններից հատուածներ են հրատարակուած։ Բրիվուայի գիրքը ընթերցող մեծամասնութեան համար չէ նշանակուած, այլ Դոդէին երկրպագող մատենասէրների համար, ուստի և տպուած է ընդամէնը 220 օրինակ, գինն է 10 ֆր.

—Փարիզում գրասէրների նոր ընկերութիւն է կազմուած «Les cent Bibliophiles» անունով։ Ընկերութիւնը սահմանափակ կազմութիւն ունի։ Նրա նպատակն է գրասէրների միջև յարաբերութիւններ հաստատել ու դիւրացնել և նշանաւոր նկարիչների աջակցութեամբ շքեղ գրքեր հրատարակել։ Անդամակցական վճարը 150 ֆրանկ է։ Ընկերութեան պատուաւոր նախագահն է Օմալի դուքսը։

—Այս տարի լրանում է վիմագրութեան արուեստի գիւտի հարիւրամեակը։ Այդ պատճառով Փարիզում օգոստոսի 15-ից մինչև նոյեմբերի 30-ը վիմագրական գործի միջազգային ցուցահանդէս կը կայանայ։

—Փարիզում թոքախտից մեռաւ Ճապոնական գիտնական և բանաստեղծ Մոտոյոզի-Սէյզո։ Նա յայտնի է և Եւրոպական մամուլի մէջ մի շարք յօդուածներով, որոնք նուիրուած են ճապոնիայի կեանքին, գրականութեան և թատրոնին։

ՏԱՃԿԱ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԱՐԻՆ յունիսի 14.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Դեռ Կարնոյ հայ հասարակութիւնը չէր մոռացեր երեք յոչոտեալ հայերի մահուան մորմոքը, որ կատարուեցան անցեալներ զինուորների ձեռամբ Էռզրում-Կալէի և թրքաբնակ Սիւիջլու գիւղի ձորի մէջ, երբ այսօր ահա նորա վրայ կը հասնի մի քանի այլ ծանր աղէտի բօթեր ևս։ Հիմնուած Թուրակ-կալէի իշխանութեան կուսակալին ուղղած մի գեկուցագրի վրայ, որի բովանդակութիւնը շատ շուտով հասարակութեան սեպհականութիւնը դարձաւ, Զահ-եօլի կիրճի մօտեր կանոնաւոր զօրաց ձեռամբ սպանուեր են Պուլանիցի 2 քահանայ և 5 աշխարհական։ Ձերբակալուեր են 8 հոգի, որոնցմէ 3-ը վիրաւորուած են։ Իսկ նայած Բասենի սահմանարարան եղող թուրք Ղարաբլիսիայի միւտիրի կուսակալին ղրած երէկուայ գեկուցագրին, Ցալի-պապայի ու Ջըռասանի մարձակայքների վրայ պահականոցի զօրապետի առաջնորդութեամբ զօրքն ընդհարում է ունեցեր Կովկասէն վերադարձող մի խումբ սպանդուխտների հետ։ Այդ միջոցին կը սպանուին 3 հայեր, որոնցից 2-ը Սասունցիներ կը լինին, վիրաւոր գերի կընկնին 5 հոգի, որոնցից 1-ը դարձեալ Սասունցի է և 14 տարեկան, իսկ միւսները ցիր ու ցան անհետ կը լինին։ Այստեղից արդէն հրամանագրուեցաւ, որ բոլոր ձերբակալուածները անմիջապէս քաղաք բերուին։ Այս կարգադրութեան հետ հրամանագրուեցաւ նաև բոլոր սահմանապահ պահականոցներին՝ ևս առաւել խստացնել անց ու դարձ։ Եւ արդէն միևնոյն այս նպատակի իրագործման համար մի քանի նոր զօրաց գունդեր առաքուեցան դէպի Բասենի և Աբաշկերտի սահմանարարաններ։

Դեռ այս աշխարհաւեր կարգադրութիւններ չվերջացած՝ կայծակի արագութեամբ լուր տարածուեց քաղաքի մէջ, թէ ամբողջ Խնուսը սրածութեան է մատնուեր հազարաւոր քրդաց կողմէն։ Արդարև լուրը դնալով իրականութիւնը առաւ և այդպէս էական։

Զրեռքցի և Ջրպարեցի յայտնի աւազակաբարոյ քրդերի մի մեծ աւազակային խումբ, սպառազինեալ ալբունիէն բաշխուած զէնքերով, կը յարձակին Ղարա-Քեօփրու, Ենկի-

---

բան բանալու խնդրին. Նորին Վեհափառութեան այդ հոգածութիւն ինքնին գրական մ'է թէ շուտով կրթասէր և հեռատես անձերի օգնութիւնը կը խմբուի և կը կազմակերպուի այդ ձեռնարկի համար։ Եւ քանի որ այդ հիմնարկութիւն Ն. Վեհափառութեան մասնաւոր կամքի և դիտաւորութեան ծնունդը պիտի լինի, այդ մասին հաստատութեան ասկէ աւելին խօսիլ մեզ չպատկանիր առ այժմ։

Սալմաստ 5—6 տարի իր արտասահմանի եղբայրների օգնող ձեռքերին յենլէ ետք, ալ կը սկսի ինքնին միայնակ քայլել, քանի որ կրթութիւնը տարածուելով, ատոր պէտքն աւելի զգալի կը դառնայ։ Եթէ Սալմաստ այժմ ինքն իրեն չքաւէր, այդ ոչ թէ այնքան նիւթական անկարողութեան համար է, որքան այն բանի, որ նա դեռ անհրաժեշտ մի կարիք չհամարեր ուսումը և կրթութիւնը. իրեն միայն ճանչցնել, սիրել տալ պէտք է առարկան և նա ինքն անոր գին կը վճարէ։ Այո Սալմաստ իր նախակրթութեան համար 5—6 տարիէն ետք ինքն իրեն պիտի կարենայ բաւել և տեղիք ունիմ յուսալու, որ մի ժամանակ կը գայ երբ ինք իր աղքատ և աւելի խեղճ քոյրերի, Որմիի և Խոյի համար պիտի անէ նոյնը, ինչ որ այսօր արտասահմանի դրամն ու գործիչը իրեն համար կ'անեն։

—

Ներկայս վերջացնելէ առաջ, պարտաւոր եմ մի քանի խօսք ալ ասել այն յարձակումների մասին, որոնք Սալմաստի թեմական տեսչի դէմ եղան, որքան մեզ յայտնի է, երկու թերթերի մէջ։

Նախ կը ցաւիմ ասել, որ Սալմաստի թեմ. տեսուչը իր քննադատողներ չունեցաւ, այլ լոկ անուանարկողներ։ Եթէ լսէինք այնպիսի, թէկուզ կծու քննադատներ, որոնք հրապարակ հանէին թէ ինչ կարող էինք անել և չարինք, կամ ինչ սխալ մի քայլ ունեցանք կամ սխալ ուղղութիւն մուցինք վարժարանների մէջ, որմէ պէտք էր զգուշանալ կամ թերութիւններ, որոնք կընային ուղղուիլ մեր միջոցներով և մենք անհոգ եղանք, այդ ատեն մենք պիտի փութայինք օգուտ քաղել այդ դիտողութիւններէ։

Անոնք, որ առանց կանխակալ կարծիքի կարդացեր են այդ երբ թէ քննադատող յօդուածներ, նկատած կը լինին թերևս որ նոցա մէջ մասամբ մը միայն լոկ ընդհանուր գանգատներ կան կրթական վիճակի անբաւականութեան դէմ, իսկ աւելի մեծ մասամբ կը վիտան այլ և այլ ակնարկութիւններով այնպիսի իրողութիւնների մասին, որոնք կրթական գործի հետ կապ չունին. այդ ակնարկութիւններին այս թանդ սիւների մէջ մենք չենք կարող պատասխան տալ, բայց ժամանակին փութացեր էինք մեզ վրայ գրուած այդ ոչ-կրթական անվայել արարքների պատմութիւններին՝ ստոր զրպարտութիւն, անհիմն մեղադրանք և չարակամ խեղաթիւրումներ լինելը յայտնելու նոյն այն թերթերի միջոցով, որոնք տարած էին և դեռ կը տպեն այդ ստութիւններ, սակայն անոնց խմբագիրները տարբերական ազնուութիւն չունեցան ամբաստանուած կողմն ալ լսել, ուր մնաց լսել տալու, և հերքումներս փոխանակ նոյնութեամբ դնելու, իրենց կողմէ խեղաթիւրելով և կրճատելով հրատարակեցին, որովհետև այդ լրագիրների համար ալ գրողի և ամբաստանուողի մը կուսակցութեան պատկանելն է առաջին նպատակաուելիք կէտը և ոչ թէ բուն ճշմարտութիւնը։ Այդ գիտնալով, իրենց թղթակիցներն ալ մասնաւոր խնամ կը տանէին նախ իրենց թղթակցութեան սկիզբը զիս ծանօթացնել թերթին իբր հակառակ կուսակցութեան մի մարդ և յետոյ կը շարէին իրենց սուտերը և կեղծախ ու վախեր, որոնք պատճառ եղան այդ թերթերի մէկին անվստահելի, իսկ միւսին բոլորովին փողոցային նկատուիլ Սալմաստի մէջ. այնքան գայթակղական էին տպուած սուտերը և խմբագիրների կողմնակցութիւնը, կուսակցութեան կըբքին կաշառակերութիւնը։

Գալով կրթական անբաւական վիճակի մասին ընդհանուր գանգատների, որոնք քննադատութիւն չեն համարուիր։ Մեզ ալ ցաւ կը պատճառէ, որ Սալմաստի ներկայ ուսուցիչների փոքր մասը միայն միջնակարգ ուսման տէր և կարող պաշտօնեայ է, իսկ մեծ մասի տեղ լաւագոյններ դնելը աղէկ կը լինէր, սակայն տարեկան 60—80 ռուբլիով, մինչև իսկ 60—80 թումանով, *) կընայ

*) Թումանի արժէքը 1,80 էն 2 ռ., արժէքի մէջ կը տատանի, (արծաթի ընթացքին նայելով)։

ձեռք բերուել աւելի կարողն. կամ թէ կայէն աւելի կարողներ, որոնց մենք արդէք եղած լինինք, թող ցոյց տան յայտնէ անուանէ։ Մի՞թէ առանց լալկան լինելու ալ ու վախ կարդալու, յօդուած մը կարելի չէ գրել։ Ներկայ շրջանի մէջ ուսուցիչներէ գտնէ 3 ին միջնակարգ ուսման տէր լինելը (առաջ մէկ հատ ալ չկար), դպրոցական ծախքերի եռապատկուիլ, ուսուցիչների թոշակին ուրիշ ժամանակի հետ բաղդատմամբ մէկուկէս և կրկին անգամ բարձրանալն, դպրոցական գրասեղանների աւելի յարմար ձևի փոխուելն և շատնալն, աշակերտների թուի ինքնաբերաբար զրեթէ կրկնապատկուիլը և 9 ամիսի դպրոցական շրջանը յօժարակամ շարունակելը փոխանակ 4—5 ամենայնի ամսի շրջանին, աւելի բարձր նախակրթութեան մ' ասանդուիլը, ասոնք միթէ կը ցուցնեն աւելի յոռի վիճակ քան ինչ որ էր առաջ։ Կարմր են արդեօք այս թուեր հերքել, կամ նախորդ ժամանակի աւելի բարձր թուեր ցոյց տալ։ Այսքանը ձեռք բերելը լոկ բարոյական ազդեցութեամբ, ԱՌԱՆՑ նիւթական մի ճնշման, եթէ դեռ լալս և տրտնջալու պատճառ մէ, այդ կը ցուցնէ որ տրտունջ յայտնողներ մտրով կուրցեր են յայտնի իրողութիւններ չտեսնելու համար. և թէ իրենք կը ցանկան ոչ թէ պակասութիւնների մասին, այլ գուցէ կը զայրանան թէ ինչու այդ գործեր կը կատարուին իրենց խմբակէն չեղող անձերի ձեռքով։

Թէ եղածն դեռ բաւական չէ Սալմաստի կրթական վիճակը գոհացուցիչ անելու համար, այդ մի գիւտ չէ, մենք ալ գործին մէջ լինելով կը կարծենք թէ իրենցմէ աւելի ևս ծանօթ ենք շատ մը զգալի և ողբալի պակասութիւնների. աւելի ուրախ կը լինէինք եթէ մեզ յայտնէին թէ տարեկան մօտ 1600 ռուբլին, որ 94—95 տարեշրջանի ծախքն է 9 վարժարանների համար, կընար աւելի օգտակարապէս գործադրուիլ, կամ կայէն այնպիսի նոր աղբիւրներ, որ մենք պէտք էինք գտնել Սալմաստի կրթական եկամտի վիճակը գոհացուցիչ անելու համար, այդ մի գիւտ չէ, մենք ալ գործին մէջ լինելով կը կարծենք թէ իրենցմէ աւելի ևս ծանօթ ենք շատ մը զգալի և ողբալի պակասութիւնների. աւելի ուրախ կը լինէինք եթէ մեզ յայտնէին թէ տարեկան մօտ 1600 ռուբլին, որ 94—95 տարեշրջանի ծախքն է 9 վարժարանների համար, կընար աւելի օգտակարապէս գործադրուիլ, կամ կայէն այնպիսի նոր աղբիւրներ, որ մենք պէտք էինք գտնել Սալմաստի կրթական եկամտի վիճակը գոհացուցիչ անելու համար. մենք դեռ այդքանն ալ ապահովուած չենք համարեր գալ տարուան համար, ուստի և այդ մասերի նկատմամբ իրենց գործնական խորհուրդներին կը սպասէինք, եթէ երբէք ունին տալու։

Քննադատութիւնը մի ձեռնարկ կործանելու արհեստ չէ, այլ թերութիւններ և մինչև իսկ կատարելութիւններ, եթէ կան, երևան բերելու. բայց Սալմաստի կրթական գործի քննադատները լոկ սուտերով անուանարկել չանալէ և մեծամեծ պահանջներ անելէ այն կողմ չանցան։ Մեր մէջ երկու ծայրայեղութիւն կը տեսնուի յաճախ. կամ բոլորովին անգիտակից, անտարբեր կը մնանք անհրաժեշտ կարիքների մասին, երբ դեռ մի մարդ չէ սկսած գործելու, կամ թէ ընդհակառակն, երբ մի որևէ անհատ վերջապէս նախաձեռնութիւն կունենայ նոյն կարիքին գոհացում մը տալու համար աշխատիլ, իսկոյն կրսկսինք պռոպայ մասի կրթական վիճակը գոհացուցիչ անելու համար, այդ մի գիւտ չէ, մենք ալ գործին մէջ լինելով կը կարծենք թէ իրենցմէ աւելի ևս ծանօթ ենք շատ մը զգալի և ողբալի պակասութիւնների. աւելի ուրախ կը լինէինք եթէ մեզ յայտնէին թէ տարեկան մօտ 1600 ռուբլին, որ 94—95 տարեշրջանի ծախքն է 9 վարժարանների համար, կընար աւելի օգտակարապէս գործադրուիլ, կամ կայէն այնպիսի նոր աղբիւրներ, որ մենք պէտք էինք գտնել Սալմաստի կրթական եկամտի վիճակը գոհացուցիչ անելու համար. մենք դեռ այդքանն ալ ապահովուած չենք համարեր գալ տարուան համար, ուստի և այդ մասերի նկատմամբ իրենց գործնական խորհուրդներին կը սպասէինք, եթէ երբէք ունին տալու։

Քննադատութիւնը մի ձեռնարկ կործանելու արհեստ չէ, այլ թերութիւններ և մինչև իսկ կատարելութիւններ, եթէ կան, երևան բերելու. բայց Սալմաստի կրթական գործի քննադատները լոկ սուտերով անուանարկել չանալէ և մեծամեծ պահանջներ անելէ այն կողմ չանցան։ Մեր մէջ երկու ծայրայեղութիւն կը տեսնուի յաճախ. կամ բոլորովին անգիտակից, անտարբեր կը մնանք անհրաժեշտ կարիքների մասին, երբ դեռ մի մարդ չէ սկսած գործելու, կամ թէ ընդհակառակն, երբ մի որևէ անհատ վերջապէս նախաձեռնութիւն կունենայ նոյն կարիքին գոհացում մը տալու համար աշխատիլ, իսկոյն կրսկսինք պռոպայ

տարած Մոտոյոզի-Սէյզո։ Նա յայտնի է և Եւրոպական մամուլի մէջ մի շարք յօդուածներով, որոնք նուիրուած են ճապոնիայի կեանքին, գրականութեան և թատրոնին։

ՏԱՃԿԱ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԱՐԻՆ յունիսի 14.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Դեռ Կարնոյ հայ հասարակութիւնը չէր մոռացեր երեք յոչոտեալ հայերի մահուան մորմոքը, որ կատարուեցան անցեալներ զինուորների ձեռամբ Էռզրում-Կալէի և թրքաբնակ Սիւիջլու գիւղի ձորի մէջ, երբ այսօր ահա նորա վրայ կը հասնի մի քանի այլ ծանր աղէտի բօթեր ևս։ Հիմնուած Թուրակ-կալէի իշխանութեան կուսակալին ուղղած մի գեկուցագրի վրայ, որի բովանդակութիւնը շատ շուտով հասարակութեան սեպհականութիւնը դարձաւ, Զահ-եօլի կիրճի մօտեր կանոնաւոր զօրաց ձեռամբ սպանուեր են Պուլանիցի 2 քահանայ և 5 աշխարհական։ Ձերբակալուեր են 8 հոգի, որոնցմէ 3-ը վիրաւորուած են։ Իսկ նայած Բասենի սահմանարարան եղող թուրք Ղարաբլիսիայի միւտիրի կուսակալին ղրած երէկուայ գեկուցագրին, Ցալի-պապայի ու Ջըռասանի մարձակայքների վրայ պահականոցի զօրապետի առաջնորդութեամբ զօրքն ընդհարում է ունեցեր Կովկասէն վերադարձող մի խումբ սպանդուխտների հետ։ Այդ միջոցին կը սպանուին 3 հայեր, որոնցից 2-ը Սասունցիներ կը լինին, վիրաւոր գերի կընկնին 5 հոգի, որոնցից 1-ը դարձեալ Սասունցի է և 14 տարեկան, իսկ միւսները ցիր ու ցան անհետ կը լինին։ Այստեղից արդէն հրամանագրուեցաւ, որ բոլոր ձերբակալուածները անմիջապէս քաղաք բերուին։ Այս կարգադրութեան հետ հրամանագրուեցաւ նաև բոլոր սահմանապահ պահականոցներին՝ ևս առաւել խստացնել անց ու դարձ։ Եւ արդէն միևնոյն այս նպատակի իրագործման համար մի քանի նոր զօրաց գունդեր առաքուեցան դէպի Բասենի և Աբաշկերտի սահմանարարաններ։

Դեռ այս աշխարհաւեր կարգադրութիւններ չվերջացած՝ կայծակի արագութեամբ լուր տարածուեց քաղաքի մէջ, թէ ամբողջ Խնուսը սրածութեան է մատնուեր հազարաւոր քրդաց կողմէն։ Արդարև լուրը դնալով իրականութիւնը առաւ և այդպէս էական։

Զրեռքցի և Ջրպարեցի յայտնի աւազակաբարոյ քրդերի մի մեծ աւազակային խումբ, սպառազինեալ ալբունիէն բաշխուած զէնքերով, կը յարձակին Ղարա-Քեօփրու, Ենկի-

---

և պահանջել որ անմիջապէս հրաշքներ անէ այդ մարդ և ոկսածը քիչ ժամանակի մէջ կատարելութեան տիպին մօտեցնէ։ Մեզնէ առաջ 2—3 տարիներ, ուրիշ շատ մ' անձեր, բարձր ուսման վիպլոմներով զինուած եկան մնացին Սալմաստ, և այժմեան քննադատողների հետ ալ շատ մտերիմ գործակցութեան մէջ էին կը կարծենք, և ունէին աւելի լայն միջոցներ, մեզ կը մնայ աւելի ցաւիլ թէ այդ անձեր ինչու չմնացին նոյն ձեռնարկները շարունակելու, թերևս յաջողէին Սալմաստ այն երջանիկ վիճակին հասցնելու, որ մենք անկարող գտնուեցանք անել մէկ տարուան մէջ։

Գալով այն ամիսկ կրթութեան, որ այդ քննադատներին թայլ կուտայ քննադատելու նիւթ չնեղ նաև ուսուցչի գըլխարկը, մօրուքը, կամ վարժուհու շրջազգեստը, այդ կը ցուցնէ որ կուսակցութեան կիրքը այդ մարդոց մէջ վերուցեր է արժանապատուութեան զգացումը. գոնէ իրենց գլուխը, իրենց թերթը յարգելու էին։ Մենք կը յարենք նաև որ եթէ այդ մարդիկ շարակամ և գծուծ անձեր չլինէին, գոնէ կը յարգէին Սալմաստի ուսուցիչներէ շատերին ցոյց տուած անշահասէր և անձնուէր ծառայութիւնը, եթէ մինչև իսկ անոնց վրայ կրթական կարողութիւններ չուզենային տես. նել։

Մ. Աւետիսեան։

1-ն յուլիսի 1895 թ.
Թիֆլիզ։

Քեոյի, Խաչլուայ, Խըռթի, Մարուֆա, Հարամիկու, Զաւուրմայի և մի քանի ուրիշ մեծաքայ գիւղօրէյից դուռաց ու ոչխարաց հօտերի և նախիրների վրայ ու անվնաս աւարի կը մատնեն նոցա։

Վատնգեալ գիւղացիք ծանօթ լինելով Թիւրքիայի քաղաքականութեանը, խոհեմութիւն կը համարեն դիմել գայմագամին։ Այդ գիւղերի ըէյսներից մի պատգամաւորութիւն կ'ուղարկուի Բերդ աւան, ուր կը նստի գայմագամը, և հարկ եղածը նորան պատմելէն յետոյ գարման կը խնդրէ իրանց կողոպուտը յետ ստանալու և միևնոյն ժամանակ աւազակները սանձելու։ Իշխանութեան ներկայացուցիչ դատաւորը փոխանակ մխիթարելու նոցա իրանց անչափ կլած վնասների համար, փոխանակ խոստանալու իր օգնութիւն յափշտակուած ապրանքները յետս ստանալու համար, թշնամանքով դուրս կ'արտաքսէ իւր գիւանից՝ «ոչիզ տէյլաթա մուխանայիթ միսընրզ» (դուք տէրութեան անհատարիմ էք) ըսելով։ Հայ իշխանները վերստին սմափուելով իրանց յուսախաբութիւնից, կը վճռեն դիմել մակ ելքին՝ զէնքի։ Վերադառնալով իրանց գիւղերը կը յայտնեն գայմագամի ապօրինի վարմունքը և կ'որոշեն, որ երիտասարդաց մի խումբ անպատճառ, թէկուզ արդէն ուշ—հետևի աւազակներին և յետ վերադարձնի կողոպտեալ անասունները։ Երիտասարդները հետամտելով աւազակաց վերջապէս կը գտնեն նոցա։ Այդտեղ երկուքի միջև տեղի կ'ունենայ մի արիւնալի ընդհարումն։ Ինչպէս հայերից նոյնպէս քըրդերից կընկնեն մօտաւորապէս 18 հոգի։ Ընդհարումի ժամանակ քիւրդերը լուր կ'ուղարկեն Բերդ աւան, գայմագամին և կը յայտնեն նորան, որ հայերը ապստամբելով արդէն զէնքի են դիմած։ Գայմագամը անմիջապէս մի զօրագունդ կ'առաքէ խռովութեան վայրը։ Զօրքը գալով փոխանակ խանդարուած կարգը վերահաստատելու կամ յանցաւորները պատժելու, անմիջապէս կը միանայ քրդերի հետ։ Այդ անկիրաւ ու անհաւասար կռուի մէջ, նայելով մեզ հասած լուրին, վիրաւորեալներով հանդերձ կը հաշուին մօտաւորապէս 150-էն աւելի հայ գիւղացիներ։

Որքան որ դեռ լուր է այս դէպքը, սակայն միւս կողմանէ իրականութիւն է այս, որ ահա քանի օր է, որ շարունակ ռազմական մեծ պատրաստութիւններով գնդեր կը տեղափոխուին ի մասնաւորի Խըռնուս այն կողմի միւս գաւառները։

Այս բոլոր դէպքերի մասին արդէն Ղևոնդ եպիսկոպոս Զիլմանեանը հարկ եղած դիմումները արեր է, ուր որ պէտք է։ Կ.-ի

ԱԼԱՇԿԵՐՏ յունիս 25.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Սրանից 5—6 ամիս առաջ, Կորեցի (Բլանըրդայ Կոր) Տէր-Յարութիւն անուն մի քահանայ, որ մի թուանաւոր և մնասակար փուչ է եղել տեղի գայմագամ էֆէնտու աչքին՝ յանուն արդարութեան և իրաւունքի՝ նեղուելով Տաճիկ կառավարութեան անտեղի բանտարկութիւնից և բարբարոս քրդի անիրաւ շռայլ (զըրպարտանք) թողնում է իր ընտանիքը թշուառութեան ամենածայրայեղ վիճակում, թողնում է տուն ու տեղ, և իր գլուխը ազատելու համար փախչելով Ռուսաստան՝ ծպտեալ շըրջում է Կարս, Ալէքսանդրապոլ, Երևան, Տփխիս և ուրիշ շատ տեղեր։ Վերջը հեռուից լսելով ընտանիքի անտանելի ցաւերը, լաւ է համարում վերադառնալ հայրենիք, թէկուզ վերջինը մահու չափ կարստաբեր լինի իրան։

15 հոգուց բաղկացած մի խումբ աշխատող Մշեցիների հետ հարկ ուսաց սահմանը անցել և տար կոխել էր Բարդոյ լեռների Խօրուզ կոչուած արիւնոտոյ կիրճ՝ երբ յանկարծ պաշարուած է տեսնում իրան 6 հոգի զինուած քրդերից, որոնք կրճի երկու բարձրութիւնները բռնելով սպասնում են խեղճերին ունեցածները վար գնելու։ բարբարոսները դրանցով էլ չբաւականանալով մի և նոյն ժամանակ օգուտ քաղելով սրանց թուլութիւնից՝ վար են իջնում հաս ու դատաստանը իրենց ձեռքով տեսնելու։

Ցիշեալ քահանան, 1 Կորեցի և 2 հոգի Թեղուտցու հետ խոնվում և իրար ետևից չարաչար տանջանքներով սպանվում են։ Խնուսայ Գէորգ ձաս՝ իսկ Միհրբրայ Առաքել աջ թևից վիրաւորուելով միւս 9 հոգի Մշեցիների հետ ազատվում, թէ անհետանում են։

Պատմում են, որ նորերս Մշոյ և Խնուսայ կողմերը բաւականաչափ զօրք են եկել, որոնք ըստ գաւառապետի հրամանին առանձին առանձին գնտերի բաժանուած՝ ապրում են առանց այդ էլ սովատանջ եղած գիւղացու օրական հայթայթած պարէնով։

Սովը օր ըստ օրէ զգալի կերպով նկատվում է, մի քիչ ցորեն ունեցող գիւղացու հարերը ընկնիչ յանձնաժողովի աչքի առաջ բռնի գատարկվում և կառավարութեան ամբարներն են լցվում տիրապետող զօրաց համար։

Ալաշկերտցի։

ԹԵՐԹՕՆ

ՄԵՖԻՍՏՈՖԵԼԷՍԻ ԺՊԻՏԸ

—

Չեմ իմանում ինչ պատճառով, բայց մեր մէջ շատ է տարածուած այն կարծիքը, որ իբր թէ միայն հայկական կեանքի մէջ են կատարվում անկարգութիւններ։ Սակայն կարող ենք ասել, որ յուսահատուելու տեղիք չկայ։ այդ բարիքից զուրկ չէ ոչ մի հասարակութիւն։ Ով որ աշխարհներ է տեսել, պատմութիւն է ուսումնասիրել, կամ ըրագիրներ է կարդացել, նա կը վկայէ, թէ Որմիզդը տակաւին ոչ մի տեղ յաղթութիւն չէ տարել և ամենուրեք Ահրիմանը վայելում է իւր գործոց պտուղ։ Զանազանութիւնն այն է միայն, որ մեզանում Ահրիմանը կարողանում է Որմզդի հագուստներով զբօսնել...

Որպէս զի ապացուցանենք, թէ լուսաւորեալ կամ լուսաւորեալ համարուած աշխարհներում ինչեր են նիւթվում, ահա հազարաւոր դէպքերից մի նորութիւն առաջ բերենք, որ հաղորդում է մամուլը։ Ռուսաստանի առաջնակարգ նահանգների մէկի մէջ վաղուց ծաղկում էր մի յիմարանոց կատարեալ կազմակերպութեամբ՝ մի բժշկապետի և չորս օգնականի անխոնջ ջանքերի շնորհիւ։ Ինչպէս որ մեզանում հոգաբարձութեան փոփոխութիւն է լինում, այնտեղ էլ յանկարծ փոխուեցաւ քաղաքային վարչութիւնը, որին որ ենթարկվում էր յիմարանոցը։ Եւ ահա սկսուեցան, մեզ էլ քաջ ծանօթ, քմահաճոյ բարբարոսութիւններ և հալածանքներ մի ազնիւ մարդու արդիւնաւոր գործունէութեան դէմ։ Պատուական բժշկապետը ոչ մի բանով մեղաւոր չէր, ընդհակառակը ամեն կերպ աշխատում էր մեղմացնել նոր դրութիւնը և չկործանել տալ այն սիրելի հաստատութիւնը, որ ինքն էր ստեղծել։—Մինչև այս կէտը պատմեցինք այն, ինչ որ և՛ մեզանում և՛ լուսաւորեալ համայնքներում անխիղճ պատահում է։ իսկ այժմ տեսնենք, թէ ինչպէս այնտեղ սրանով Ահրիմանի իշխանութիւնը վերջանում է և Որմզդի իշխանութիւն է ըսկվում։

—Գիտնական աշխարհից ծածուկ չըմնաց, թէ յիշեալ բժշկապետի արդիւնաւոր գործունէութիւնը որպիսի վնասեցուցիչ ազդեցութիւններով է խանգարվում, թէ ինչ թշնամութիւն և ինչ զըրպարտութիւններ է թափվում նորա գլխին։ Ռուսաց բժիշկները օգուտ քաղելով առաջին պատահած առթից, յանուն Պիրագովի գումարուած ժողովից, այն բոլոր մարդութեանցը նորանով պատասխանեցին, որ հալածուած բժշկապետին ընտրեցին պատուաւոր նախագահ—մի պատիւ, որ միայն պրոֆեսորներին է վիճակվում։

Երբ որ քաղաքային վարչութիւնը դառնութեան վերջին կաթիլը խմեցրեց բժշկապետին, սա ստիպուեցաւ հրաժարական տալ պաշտօնից, իսկոյն առաջինը ուրախութեամբ ընդունեց վերջնոյս հրաժարականը և նորա օգնականների մէջէն առաջարկեց կառավարել յիմարանոցը։ Բայց օգնականը ոչ միայն մերժեց իբր պատուաւոր առաջարկութիւնը, այլ անմիջապէս ներկայացրեց բոլոր չորս օգնականների հաւաքական խնդիրը, որ ազատ կացուցանուին իրենց պաշտօնից։

Այնուհետև չարաթներ անցան, քաղաքային վարչութիւնը լրագրական յայտարարութիւններով և անձամբ դիմեց շաւերին, նոյն իսկ պրոֆեսորներին, որ բաց պաշտօնների համար յարմար մարդիկ գտնեն, բայց ոչ ոք չհամաձայնեց արատաւորուած պաշտօնները ընդունել։ Մի ամսագիր խօսելով այս խնդրի մասին աւելացնում է. «Ամբողջ ռուսաց բըժշկական աշխարհը վրդոված է այս դէպքից։ համալսարանները, ուսումնական ընկերութիւնները, հիւանդանոցները միաբանական ոգով առաքում են պաշտօնաթող բժիշկներին համակրութեան ուղերձներ և հեռագիրներ, իսկ քաղաքային վարչութիւնը ամեն տեղերից ստանում է մերժումն։ Եւ յիրաւի, էլ ով կը վստահանայ անձնուրաց բժշկապետի և իւր արժանաւոր օգնականների տեղը բռնել։ Ո՞վ կը համարձակուի դաշն կապել յամառ բռնութեան հետ, որով մի ընտիր հաստատութիւն հիմնովին ցնցուեցաւ։ Ամենայն բժիշկ գիտէ, որ այն հաստատութեան ստեղծող մշակը անզուգական անձնուրոյրութիւն էր, անդրդուելի համոզմանց տէր, խաղաղարար, ճշմարտասէր, անձնուէր և սիրահար էր իւր գործի։ Ո՞րքան անձնապաստանութիւն պիտի ունենայ ովկիցէ, որ երազէ, թէ այսուհետև յաջողութեամբ պիտի կարողանայ վարել գործը այնպիսի պայմաններում, ուր հալածուած բժշկապետի պէս անձնուրոյրութիւնը դիմանալ չկարողացաւ, ապարդիւն համարելով ամենայն ջանք գործի փրկութեան համար, ուր չօգնեցին ոչ նորա փորձառութիւնը, ոչ եռանդը, ոչ կոչման հաւատարմութիւնը։»

Այստեղ կանգ եմ առնում, մի շարք կարևոր խորհրդածութիւններ անելու համար։

1) Ես չեմ ասում, թէ մենք էլ նոյնութեամբ գործենք. ես ինքս կարող եմ պատմել, թէ զորօր. մեր զղրոցական կեանքում որքան տղայական-կապկական սխրագործութիւններ են կատարուել։ Այլ երբ որ մի հասարակութեան մէջ հոգին առողջ է, այնտեղ երկիւղ չկայ Ահրիմանից... (Էէնց, որ Ահրիմանի անունը դրոշմեցի թղթի վրայ և ազատ շունչ քաշեցի, որ կարևոր խորհրդածութեանց շարքը շարունակեմ, յանկարծ առջևի կիսաբաց վարագուրի յետևից երևեցաւ Մեֆիստելէսը և չարախնդաց դիւական ժպիտը երեսին՝ արհամարական թուզ ցոյց տուեց—մեր սգոյ մերկութեան դէմ։

Ուսուցիչ։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Յուլիսի 1-ից.

ՎԻԵՆՆԱ.—Պօլսից՝ հաստատ աղբիւրներից հաղորդում են, որ ի բաց առեալ սահմանագլխի մի քանի կէտերում հսկողութեան անչափ կերպով աւելացնելը, զօրքերի առանձին տեղափոխութիւն չի եղել բոլոր սահմանում յունիս և յուլիս ամիսներին։

Յուլիսի 2-ից.

ԲԵԼԳՐԱԴ.—Կ. Պոլսի յունական դեսպանը մեծ վեզիրին յայտնեց, որ բոլոր եպիսկոպոսների հաստատումը անհաճոյ տպաւորութիւն կը թողնի Աթէնքում։ Սերբիական դեսպանը գրեթէ նոյնժամանակ Դրանը դիմեց նոյնպիսի յայտարարութեամբ։

ԼՕՆԴՕՆ.— Առ այժմ ընտրուած են՝ 91 միութենականներ, 7 ազատամիտ և 4 պարնէլական։

Յուլիսի 4-ից.

Կ. ՊՕԼԻՍ.—Ասում են, թէ յունական խմբակներ են ցամաք իջել Կրետէի վրայ։ Զօրք է ուղարկուած։

ՍՕՖԻԱ. — «Բակ. գործակալութիւնը» հաղորդում է, որ Փիլիպպոպոլից դուրս եկած կամաւորների զօրքը, որոնց առաջնորդում էր Ստոյանովը, զինաթափ է արուած և ցրուած։ Ստոյանովը և կամաւորներից շատերը, որոնք զինուած էին Մանլիխէրի հրացաններով, ձերբակալուած են։ Ենթադրում են որ զօրքին զէնք մատակարարողը Ստամբուլովն է, որ իւր՝ նախագահնախարար եղած միջոցին մեծ քանակութեամբ հրացաններ էր ձեռք բերել։

ՍՕՖԻԱ. («Բէյտէր»).—Երէկ երեկոյեան սրերով և ատրճանակներով զինուած չորս հոգի յարձակուեցան Ստամբուլովի վրայ, որ վերադառնում էր կլուբից։ Ստամբուլովը գըլխից մի քանի վէրք ստացաւ։ Ըստ երևոյթին հիւանդի դրութիւնը շատ վտանգաւոր է։ Արիւն շատ է գնացել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ
Յունիսի 30-ից.

Վեքսէլի կուրս 3 ամսով։

Լօնդօնի վրայ 10 ֆ. ստ.	93,
Բերլինի վրայ 100 մարկ	45,45
Փարիզի վրայ 100 ֆր.	36,85
Նոր կտրած պլուխպէ-ղիպաները	7,40 գն. 7.40 վաճ.
Բօրսայի գեղջը	5-ից 7%
4% Պետական արժեթղթ.	99½
5% ոսկ. արժեթ. 1894 թ.	164½
5% Առաջին ներքին փոխ. խաղատոմս 1864 թ.	239
5% Երկր. ներքին փոխառ. խաղատոմս 1866 թ.	226
5% Ազնուական. հող. բանկի գրաւական. խաղատոմս.	207
5% Պետական երկաթուղու արժեթղթեր	101¾
4% Ներքին փոխ. I սեր.	99¼
» » » II »	99¼
» » » III »	99¼
» » » IV »	99¼
4½% փոխ. 1893 թուի.	101
» փոխ. 1 հրատարակ.	100¾
» փոխ. 2 հրատարակ.	100½
4½% Դրաւակ. արժեթղթ. ազն. հողային բանկի.	101¼
4½% Գիւղական հողային բանկի վկայագրեր.	100¾
5% Ս. Պետ. քաղ. վ. ընկ.	100¾
» Մոսկուայի	101
5½% Օդեսայի	100
5% Թիֆլիզի	99¾
5% Դրաւակ. արժեթ. հող. բանկերի Խարկովի	100¾
» Պոլտավայի	99⅞
» Տուլայի	100
» Կիեվի	100½
» Մոսկուայի	100½
» Բեսարաբիայի	99¾
» Ներքին Սամարայի	100
» Դօնսկոյ	99¾
» Վելիկոյէ	100
6% և 5% Թիֆլիզի	101 և 99½ գն.
» Քութայիսի.	101 և 99½ գն.

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների։
Կ. Մ. ՁԻՆՕՎԱՆԻ—9 -10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ—ՁՁԵՐԲԻՆԱ—11—12 ժ. կանանց և ներքին հ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՅԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ի. Ֆ, ՊՐՕՏԱՍՅԵՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների ներքին և մորթի հ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խիր, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։

Բժշկական ընդունարան
ԲԺՇԿ. ԴՈԿՏՕՐ.
ԱԻԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ
Սօլօլակ, Սերգիևսկի փողոց № 14.

—

Իւր բացակայութեան պատճառով ամառս հիւանդներին կ'ընդունէ դոկտոր Սամուէլ Շահ-Պարոնեանցը նշանակեալ ժամերին։

Բացի դեղերից գործադրվում են նաև դանազան տեսակ ՋՐԱՌՈՒԺԱԿԱՆ, ԵԼԵՔՏՐԱՌՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական մեթոդներ։

—

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ
ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)
12½—1½ ժ. ցերեկը { կինարմատներ և երեխաներ
1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյեան { աղամարդիկ

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկարարձ-մասնաժ տնող կին և մասնաժիսա պարոն։

Անդրկովկասեան երկաթուղի

—

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թէֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Դանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Դանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանքա-մարդատար գնացքը Դանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտեան 7 ժ. 35 րոպէին։

ՓՈՍՏԱՑԻՆ ԵՐԹԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց պատերազմական Ճանապարհով.

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԻՆ-ԲԺԻՇԿ
Ա. Ի. ՇԱԵՐԲԻՆԻՆԱ.
Ընդունում է հիւանդներին ամենայն օր առաւօտեան 9—11 ժ. և երեկոյեան 5—7-ը։ Գօլովինսկի Պրոսպեկտ, տուն Ալելովի։

«Կենդրոնական գրավաճառանոցում» վաճառվում են ՔԱՄԱԼԵԱՆ Օ-ի հետևեալ գրքոյկները.

1. Ստատուած չճանաչող գինը	10 կ.
2. Գալօ ափօ	10 »
3. Խուլ Խաչիկ	25 »
4. Ճէն-Թագաւորի աղջիկը	25 »
5. Ծովինար	20 »
6. Խարազի տղայ	40 »
7. Հէքեաթներ (5 պատմութիւն).	30 »

Գր. Փարսադանեանցի հրատակութեամբ
ԼՈԲՍ ՏԵՍԱՒ
ՄԻ ՏՕՆ ՕՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ
Թարգմ. Ե. Լալայեանի։
Վաճառվում է Կենդրոնական գրավաճառանոցում։
ԳԻՆՆ Է 5 ԿՈՊԷԿ

ՈՒՄՈՒՑԱՑ ՀԱՄԱՐ | Ռ. Կ.
1) Ուղեցոյց հայ կրօնուսոյցների համար (հին ուխտ) . . . 1 75
2) Ուղեցոյց հայ կրօնուսոյցների համար (նոր ուխտ) . . . 2 5
3) Մի քանի խօսք հայ կրօնուսոյցներին . . . . . — 10

ԱՁԱԿԵՐՏԱՑ ՀԱՄԱՐ
4) Դասատետր կրօնի Ա. տարի գ. տիպ. . . . . — 15
5) » » Բ. » հ. « . . . . . — 20
6) » » Գ. » դ. « . . . . . — 30
7) Սրբազան պատմութիւն հին ուխտի գ. տիպ. . . . . — 40
8) » » նոր ուխտի բ. « . . . . . — 40

Վերոյիշեալ գրքեր ցանկացողները կարող են դիմել կամ ուղղակի ինձ (Тифлисъ: Священнику Сааку Саакянцу) կամ «Կենդրոնական գրավաճառանոց»։

Ինձ դիմողներն ստանում են 20% զեղչ (ճանապարհածախսն իրանց վրայ է)։ Սահակ քահ. Սահակեանց։
(10—1)

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ

	Ռ. Կ.
Ալիշան. Հայրենասէր կամ Հայկական բուսաբանութիւն	3 75
Բօկլ. Կանանց ազդեցութիւնը գիտութեան յառաջադիմութեան վրայ	— 20
Գարագաշեան. Քննական Պատմ. Հայոց մ. ա. Թիֆ. 1895 թ.	1 —
Գիրք հանդիսաւորութեան տօնից կայսերական	— 50
Գեօլլինգիրի նամակները և յայտարարութիւնները Վատիկանի հրովարտակների մասին 1869—1887	— 50
Լեոնեանց. Հայոց պարբերական մամուլը	3 —
Լալայեանց. Մի տօն օր Կովկասում	— 5
Լուսայ. Դաբօի ընտանիքը, վէպ Թիֆլիզի կեանքից	— 60
Հայկունի. Ս. Բագրեանդ Ջրաբաշխ գաւառ	1 50
Մաղթանք. Վասն Հայրապետի ազգիս	— 50
Ջիւանի. Աշղ-Դարիքի հեքիաթը	— 40
Տիգրանեանց Լ. Բժ., Մանկական պարէզ	— 20
Տօդդ. դ-ր. Մեղրի զզջումն	— 5
Քամալեանց Ս. Գալօ-ափօ	— 10
« Ստատուած չճանաչող	— 10
Երզնկեան. Գրիգորիոս. Պատմութիւն մանկավարժութեան հայկական կըրթական բաժնով	1 —
Տուէն. Իշխանն ու աղքատը	1 —
Տուրգենիեվ. Սրձակ բանաստեղծութիւններ, թարգ. Ադէք. Ծատուրեանի	— 50
ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ. Ժամանակ և Խորհուրդ իւր, Թիֆ. 1895 թ.	— 15
Ղազանեանց Գիւտ քահ. Գիւան Հայոց պատմութեան գ. I—II 2 ռ. և գ. III 7 ռ.	

ԼՈԲՍ ՏԵՍԱՒ
ԻՎԱՆ ՏՈՒՐԳԵՆԵՎԻ
„ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ"
(Стихотворенія въ прозѣ)
Թարգմանեց ԱՂԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ
Գինն է 50 կ., ճանապարհածախսով 60 կ.։
Ցանկացողները դիմում են Թիֆլիզ «Կենդրոնական գրավաճառանոցին» կամ թարգմանչին՝ Москва, Новая Басманная, домъ Шибаевой контора М. Л. Шоршорова, *Александру Цатурянъ.* (5—1)

Լոյս տեսաւ և վաճառվում է
ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
„ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ"
(Հայկական կրթական բաժնով)
Աշխ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՐԶՆԿԵՄՑԻ
Գինն է 1 ռուբլի. գումարով գնողներին զիջումն։ (5—1)

Արդէն թարգմանել եմ Բեօրնստիերնէ-Բեօրնսօնի «ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐ» կատակերգութիւնը և շուտով կը յանձնեմ տպագրութեան։
(1—1) Արշակ Եղիգարեան.

Дозволено цензурою, Тифлисъ 4-го Іюля 1895 года. Տպարան Մ. Նազարեանցի և Ընկ. Типографія М. Мартиросянца и К°. На Михайловской ул., № 81.